

634

Handwritten text at the top of the page, including the title 'ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ' and other illegible script.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ


ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ԵՒ ԳԻՒՐՈՒՍՈՅՑ ՈՃՈՎ
Ա. ՅԲԲԵՆԱՐԱՆ
ՀԵԳԱՐԱՆ ԵՒ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ


معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۲ محرم ۱۳۱۴ و ۱۱ حزیران ۳۱۲
تاریخی و ۲۹۱ نومرولی رخصتنامه سیله طبع اولنشد



Կ. ՊՈԼԻՍ
Տպագրութիւն եւ Վիճագրութիւն
Յ. ՄԱՏՕՒՍԵԱՆ

1896





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ Պ. ՊԱԼԵՆՅ ԳՐԱՏԱՆ

Տարերի ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ ԵՒ ԴԻՒՐՈՒՍՈՅՅ ՈՃՈՎ
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ
ՀԵԳԱՐԱՆ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتنامہ سبلہ طبع اولمشدر




Կ. ՊՈԼԻՍ

Տպագրութիւն եւ վիճագրութիւն

Յ. ՄԱՏԹԷՍԵԱՆ

1894

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
634




Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՉՈՒՆ՝ ազգիս մանկտւոյն աւելի հրապուրիչ եւ աւելի դիւրուսոյց ու արդիւնաւոր ընելու տենչն ու փափաքը , դրդեց զմեզ 'ի լոյս ընծայել սոյն դասագիրքն , որ նշանաւոր մանկավարժներու երկարամեայ փորձառութեամբ ու ուսումնասիրութեամբ հեղինակած այլ եւ այլ հրատարակութիւններէ քաղուած ք մ'է , եւ որ մանկավարժական նոր ոճով ու դրութեամբ՝ խնամով հաւաքուած , դասակարգուած ու սլափաստուած է :

Ընթեցանութիւնը նորուս մանկտւոյն հեշտին ու զուարճալի ընծայելու նպատակաւ , սոյն դասագրքին մէջ զետեղուած են սիրուն եւ գեղեցիկ պատկերներէ զատ , վանկաւոր բառեր , խօսքեր , վէպեր , հրահանգներ , խտրեր , հանելուկներ , եւայլն , որոց ամէնքն ալ զրօսեցուցիչ եւ որ փափաքելին է՝ օգտակար են մանկան , այլ սակայն , հարկ է գիտնալ որ սոցա արդիւնաւորութիւնը կախում ունի միայն եւ միմիայն ուսուցչաց դասաւանդութեանց ընթացքէն , որոց փորձառութեանը վստահ եմք , եւ որք պարտին խօսակցութեան ձեւի տակ աւանդել զայնս :

Սոյն դասագրքիս օգտակարութեանն ու դիւրուսոյց ընթացքին նկատմամբ շեմք ուզեր երկար գովեստներ չուայլել ինքնին , այլ կը բաւականանամք՝ խնդրելով պատուարժան ուսուցիչներէն ու դաստիարակներէն , որ բարեհաճին միանգամ աչքէ անցնել ու փորձել , վստահ ըլլալով որ , նախընտրելով զայս , պիտի փութան քաջալերել զմեզ :





ԱՅԲԲԵՆԱՐԱՆ



Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ
Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո
Չ	Պ	Ջ	Թ	Ս	Վ
Տ	Ր	Ց	Ի	Փ	Ք
		Օ	Ֆ		

9. 8. 7. 6. 5. 4. 3. 2. 1. 0. 9. 8. 7. 6. 5. 4. 3. 2. 1. 0.
 9. 8. 7. 6. 5. 4. 3. 2. 1. 0. 9. 8. 7. 6. 5. 4. 3. 2. 1. 0.
 9. 8. 7. 6. 5. 4. 3. 2. 1. 0. 9. 8. 7. 6. 5. 4. 3. 2. 1. 0.

m p q r s t u v w x y z
 h i j k l m n o p q r s t u v w x y z
 a b c d e f g h i j k l m n o p q r s t u v w x y z
 . h o p

u p q r s t u v w x y z
 a b c d e f g h i j k l m n o p q r s t u v w x y z


- 1 2 3 4 5 6 7 8 9 0 -
 1 2 3 4 5 6 7 8 9 0

1 2 3 4 5 6 7 8 9 0
 10 20 30 40 50 60 70 80 90
 100 200 300 400 500 600 700 800 900

ՏԱՐԵՐՔ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ա. ՏԱՐԻ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1

Կ ո Վ

Կ, ո, Վ, կոՎ, պ, ս, չ, պոչ.

ս, ա, ք, սաք, ա, չ, ք, աչք.

ձ, ի, ձի, ձ, ս, լ, ձու, ձ, ա, դ, ձագ.

ձ, ա, ր, ձար, ձ, Կ, ր, ձեր.



Ձ

չուն

չ, ու, ւ, ն, շուն. ն, ու, ւ, շ, նուշ. տ, ո, ւ, ն,
տուն. էշ, իշուկ. շուն, շունիկ. փխսի,
փխիկ, ոտք, աչք, մատ, քիվժ *



3


Հաւ

Հ, ա, ւ, հաւ. ն, ա, ւ, նաւ. բ, ա, ւ, բաւ.
քաւ, լաւ, կաւ, կատաւ, հաւ, ձագ. ձագ
ու հաւ, էշ, կով. կով ու էշ. կատու,
չուն. շուն ու կատու. դաշնակ, դանակ,
դանակ ու դաշնակ :

4

կատու


կ, ա, տ, ո, ւ, կատուն. փ, ի, ս, ի, փիսիկ,
ճ, ա, ն, կ, ճանկ. բ, ե, ը, ա, ն, բերան.
ք, ի, թ, քիթ. թ, ա, թ, թաթիկ.
ձեռք, սրչ, փոր, մազ :



5

փիղ

փ, ի, դ, փիղ, ո,ւ,դ,ա, ուղտ, ա,ր,ջ,
արջ, գ,ա,յ,լ, գայլ, գ,ա,ռ, գառ, ո,ւ,լ,
ուլ, ո,ս,կ,ի, ոսկի, ո,ա,ի,կ, ոտիկ,
ա,ո,ա,ի,կ, աոտիկ, թաթիկ, դաւակ,
առակ, կար, սեղան, ծառ, խնձոր, ասնձ



6

էշ,

է, շ, էշ. մ, ա, զ, մազ. մ, ա, տ, մատ.
շ, ո, ւ, ն, շուն. ն, ո, ւ, շ, նուշ. տ, ո, ւ, ն,
տուն, էշ ու կով, շուն եւ կատու :

ճի, ճիտ, ճիւ, ճանկ, ճանճ, քար,
ճակատ, ճակատ. ճրն ճրղուկ, ճրնճրղուկ,
ճրնճրղուկ. ճան ճիկ, ճանճիկ. ճահիճ,
ճահիճ. քաւ, քաւ իշ. ճար, ճար պիկ,
ճարպիկ. ճեր, ճեր մակ :



7

սազ

սազ, թաթ, դա, դու, քու, բու,
բուն, բան, շան, տան, բակ, բաշ, տաշ,
քաշ, դաս, թաս, սար, դար, տար, քար,
դառ, դառ, շար, լար, ճամ, չար, բառ,
փառ, լար, հաց, տաշտ, դաշտ, ժառ :

8

աբլոր եւ հաւ

հաւ, հաւ կիւթ. աբլոր, աբլոր. հաւ եւ
 աբլոր. հաւը կածէ հաւկիւթ. աբլորը կը
 խօսի. ես հաւ մը ունիմ. իմ աբլորս կար-
 միր է :

Իմ աբլորս կուկուլիկու կընէ, քու հաւըդ
 ալ կածէ :

9

| | | |
|------|-----|-------|
| Բաւ | Դաւ | Գաղ |
| Բառ | Գամ | Գիւրք |
| Գառ | Կամ | Թուղթ |
| Նաւ | Համ | Ծայր |
| Շար | Կամ | Շիշ |
| Կաւ | Հաւ | Զուր |
| Սար | Զար | Հաց |
| Դար | Կաղ | Զեռք |
| Քար | Քաղ | Ոտք |
| Լաւ | Բու | Աւք |
| Կուլ | Լու | Ծուռկ |

| | | |
|--------|--------|-----------|
| Թանակ | Գանակ | Խաղաղ |
| Գաշնակ | Գրիչ | Աւաղ |
| Քանակ | Քերիչ | Ճիւաղ |
| Զանգակ | Կաւիչ | Հաւկիթ |
| Թռչնակ | Կարիչ | Յակինթ |
| Օղակ | Ծաղիկ | Սիրուն |
| Սմբաղ | Շողիկ | Խոհուն |
| Սահակ | Նունիկ | Բարեք |
| Տանեակ | Աշուն | Զարեք |
| Մանեակ | Գարուն | Գաւիթ |
| Գալեռ | Տժգոյն | Խրճիթ |
| Տաւիղ | Անուն | Արթուն |
| Անուշ | Քաղաք | Զուարթուն |
| Ապուշ | Վանդակ | Աւաղ |
| Գռնակ | Ծիծաղ | Բամբակ |

11

| | | |
|-----------|----------|----------|
| Արեգակ | Տաղարան | Վառարան |
| Ճոճանակ | Քառարան | Բառարան |
| Գանձանակ | Ազգական | Մանուշակ |
| Կարկանդակ | Բնական | Արուսեակ |
| Շուշանիկ | Լըսարան | Պաղաբեր |
| Անուշիկ | Վարժարան | Բարեբեր |

12

| | |
|----------------|---------------|
| Փսի, փսիկ | Կով, կովիկ |
| Շուն, շնիկ | Հորդ, հորդուկ |
| Մուկ, մըկնիկ | Տուն, տնակ |
| Սան, սանիկ | Չագ, ձագուկ |
| Մանուկ, մանկիկ | Հայր, հայրիկ |
| Էշ, էշուկ | Մայր, մայրիկ |

13

| | |
|-----------------|-----------------|
| Հաւը կածէ | Պողոս կը գրէ |
| Շունը կը հաչէ | Պետրոս կը կարդա |
| Էշը կը զուս | Յակոբ կը խաղա |
| Ուխտարը կը մայէ | Սահակ կը խնդա |

14

| | | |
|------|-------|--------|
| Ջուր | Ճանկ | Յուցակ |
| Հուր | Յանկ | Շիտակ |
| Սար | Գեր | Մկրատ |
| Քար | Կեր | Գաւաթ |
| Չար | Յորեկ | Բաժակ |
| Ծառ | Կորեկ | Մարազ |
| Զառ | Կորազ | Թանակ |
| Թառ | Դարակ | Թռչակ |

15

Եկու դարուն
Ինչպէս սիրուն
Բեր մեզ արեւ
Յող ու անձրեւ
Իջիր գետին
Ջուր տուր հողին
Յորեն բուսցուր
Պտուղ հասցուր
Ուտենք խմենք
Աստուած օրհնենք :

| | |
|--------------|-----------------|
| • • • փխտի | գետինն • • • |
| • • • հարսի | ծակինն • • • |
| Թաթիկ • • • | • • • համար |
| Ճանկիկ • • • | • • • նստած |
| • • • նստած | աղւոր • • • |
| • • • դիմաց | սիրուն • • • |
| • • • սիրեմ | • • • համբուրեմ |

Փխտի փխտի
 Նման հարսի
 Թաթիկներով
 Ճանկիկներով
 Գետինն նստած
 Ծակինն դիմաց
 Ինչո՞ւ համար
 Տրտում նստար
 Անոր համար մուկ չի գտար
 Աղւոր փխտիկ
 Սիրուն փխտիկ
 Եկու սիրեմ
 Քեզ համբուրեմ



17

Ճընճուղիկներ

Ա, ճընճուղիկի
Կարմիր սոսիկ
Ճերմակ փորիկ
Ռատես կուտիկ

Խմեա ջրիկ
Առուին մօտիկ
Երթաս բունիկ
Չազեր քովիկ

Գիւղացիին մին
Մէջը մառանին
Ունէր մի խոշոր
Պանիրի կտոր ։

Ծակէն կը նայէր
Սիրտը կը ցաւէր
Հոն կար մէկ մուկ
Մեծկակ գիրուկ ։

Կըսէ գիւղացին
Չնչեմ կենդանին
Կատուն կը բռնէ
Ու ներս կը հրէ ։

Նա կը մանէ ներս
Ինչ կընէ գիտե՞ս
Մուկը կը բռնէ
Պանիրը կուտէ :

19

Կալ

Սալ

Վալ

Լալ

Բալ

Բալ

Նալ

Գող

Դող

Լող

Ուլ

Կուլ

Ուշ

Նուշ

Արեւ

Տերեւ

Լըճակ

Լեղակ

Քաղաք

Սողալ

Մոռնալ

Մօտենալ

Լուանալ

Ունենալ

Լրանալ

Իմանալ

Խռովիլ

Յորենը բուսաւ

Սահակ սահեցաւ

Ներսէս ներս մտաւ

Մանուկ մուկ տեսաւ

Վարդենին վարդ բերաւ

Պետրոս տուն գնաց :

20

Օձ

Իսկ

Մուկ

Ձու

Կոր

Ծոր

Չոր

Տանձ

Քանձ

Սանձ

Խակ

Յած

Յանդ

Քանկ

Արօր

Կարօտ

Արտտ

Արտտ

Խաղաղ

Խաբուկ

Խարան



Օձ

Օձը կը սողա
 Չին կը փռնչէ
 Պետրոս պարտէզ գնաց
 Ես գնդակ խաղացի
 Վերժինի կերգէ
 Զապել կը պարէ :

21

| | | | |
|------|-----|--------|-------|
| Ծուռ | Ծեր | Ծուռիկ | Ոչխար |
| Ծուծ | Չեր | Ճանկ | Գարի |
| Ծառ | Չիր | Ծիրան | Ամառ |
| Քար | Չոր | Յորեն | Չմեռ |



Օձ

Օձը կը սողա
 Չին կը փռնչէ
 Պետրոս պարտէզ գնաց
 Ես գնդակ խաղացի
 Վերժինի կերգէ
 Զապել կը պարէ :

21

Ծուռ
 Ծուծ
 Ծառ
 Քար

Ծեր
 Չեր
 Չիր
 Չոր

Ծունկ
 Ճանկ
 Ծիրան
 Յորեն

Ոչխար
 Գարի
 Ամառ
 Զմեռ

Մեծատուն
 Մեծագործ
 Մեծասար
 Ճգնաւոր

Փառաւոր
 Ձեռնասուն
 Սիրատուն
 Բանիբուն

Սիրուն գառնուկ
 Ինչպէս փափուկ
 Գնա արօտ
 Քաշեմ կարօտ

22

Բաթ

Սար

Փողոց

Թաթ

Թառ

Սըղոց

Բօթ

Փառ

Փափաք

Թութ

Գաս

Դայեակ

Փակ

Նուռ

Թութակ

Փոս

Դուռ

Թանակ

Փոր


Լուր

Փուռար

Հօր

Հուր

Նորանոր



Բաղ ու Եղ

Բաղիկ բաղիկ
Կարմիր թաթիկ
Կերթաս կամաց
Չաղերդ առած
Չուր գտնելու
Լուանալու



Կով

23

| | | | |
|-------|-------|--------|--------|
| Կով | Ոտք | Երկայն | Շարժէ |
| Հով | Զորս | Երկու | Կուգայ |
| Մօ մօ | Խոտ | Խոշոր | Սախնք |
| Պոչ | Քովիկ | Կեղնէ | Եղջիւր |

Կովը մօ մօ
 Կը բառաջէ
 Ականջները
 Կը շարժէ
 Երկու եղջիւր
 Խոշոր աչքեր
 Երկար պոչ մը
 Ունի կովիկ

Դանդաղ դանդաղ
Չորս ստքերով
Կենիւ կուգայ
ձորձորալով

24

| | | |
|--------|--------|----------|
| Քար | Արի | Մատանի |
| Կար | Բարի | Ա.քաղաղ |
| Քիթ | Քամի | Բարեսիրտ |
| Քիչ | Տարի | Քարասիրտ |
| Ճիչ | Չորի | Գթասիրտ |
| Ականջ | Չութակ | Սիրուն |
| Ախորժ | Թութակ | Թագուն |
| Քացախ | Աւան | Մրջուն |
| Բանջար | Գարուն | Թռչուն |

Քոյրս շութակ կ'ածէ

Չապել սար կը խաղայ

Պետրոս երկու խնձոր գնեց, մին ինձ տուաւ
մին Չապելին :

| | | |
|---------|--------|----------|
| Պար | Լապտեր | Նահապետ |
| Պատ | Պաշար | Կարապետ |
| Պարկ | Պարսպ | Վարդապետ |
| Պահ | Պալար | Մայրապետ |
| Պիղծ | Կլոր | Օգտակար |
| Պիշ | Բոլոր | Ծիծեռնակ |
| Գեղեցիկ | Սալոր | Կնքահայր |
| Երգես | Խնձոր | Կնքամայր |

Ախ ծիծեռնակ

Սիրուն թռչնակ

Որչափ արագ թռչիս

Նոյնչափ գեղեցիկ երգես :



| | |
|--------|----------|
| Չատիկ | Աւետարան |
| Թաթիկ | Սրբազան |
| Սիրով | Յիսուս |
| Գորով | Իմ յոյս |
| Մօրով | Եղբայր |
| Սաղարթ | Քոյր |
| Չուարթ | Համբոյր |

Չատիկ է զատիկ
Ինչ օր գեղեցիկ
Եղբայր ու քոյր
Մին միւսին տայ Համբոյր
Չատիկ է եկե՛ր
Մեզ նոր օր բերեր
Եղբայր քոյր սիրով
Հօրով ու մօրով
Համբոյր տան սիրով*



ՊԸԸԿՈՒԼ

27

ՊԸԸԿՈՒԼ

Ա՛նդուԼ

Համայն

Ըղձանան

Ա. յդպէս

Ծածկես

Մարգեր

Դաշտեր

ՊԸԸԿՈՒԼ

Ա՛նդուԼ

Ի վիշտ

Դու վիշտ

Աշխարհ համայն

Քեզ ըղձանան

Ինչու այդպէս
Դէմքդ ծածկես

Ահա մարդեր
Կանանչ դաշտեր
Թռիլը երգէ
Ամէն քոյ է :

28

Յակօբոս բարի և աղքատասէր տղայ մը
էր . ամէն առաւօտ կանուխ կելնէր , նախ
իւր աղօթքը կրնէր և ապա կսկսէր դասերը
սպտրաստել :

Յակօբոս ամենէն ալ կը սիրուէր :

Յիսուս բարի աղաքները օրհնեց :


Յակօբոս ամէն Կիրակի օր հօրմէն տասը
փարայ կառնէր և աղքատին կուտար :



29

ՀՆԶՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ ⁽¹⁾

- | | |
|-----------------------|------------------------------------|
| (,) Ստորակէտ | ([^]) Ոլորակ կամ պարոյկ |
| (.) Միջակէտ | ([˘]) Երկար |
| (:) Վերջակէտ | (~) Տողադարձ |
| (') Մակակէտ | () Փակագիծ |
| ([˘]) Բուծ | (») Չակերտ |
| ([˘]) Շեշտ | |



(¹) Դասատունն ասոնց նշանակութիւնները և գործածութեան եղանակը պիտի սովորեցնէ աշակերտաց, զանազան օրինակներով:





ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱՍ Ա.

Դու ի՞նչ ես. — Մարդ եմ: — Ի՞նչ է ատ. — Տանձ է: — Ինձ տուր զայն. — Չեմ տար: — Ո՞վ է ան. — Քոյրս է: — Չին ո՞ր է. — Հոս է: — Բեր այս տեղ. — Չի դար: — Հաց տուր ինձ. — Առ հաց: — Աս քիչ է, դեռ տուր. — Ո՞չ, բաւ է, սաւ և կեր: — Ի՞նչ մեծ ծառ, բայց մեղք որ չոր է: — Աս ի՞նչ գէշ օդ է, շատ ցուրտ է. — ո՞չ այսօր շատ տաք է: — Տես, ինչ մեծ մուկ է: —

Դ Ա Ս Բ .

Հոս այժ մը կայ ժիր , հոն շուն մը կայ քաջ : — Քիչ
մը թուղթ սուր ինձ : — Աս շատ հաստ թուղթ է : Քար
մը առ ու բեր : — Թոյլ մը ջուր : — Ափ մը հող : — Հող
հաւ կոյ : — Ո՛չ , բաղ կայ : — Տես ինչ շար թուշուն : —
Յած ծառ մը կայ ձեր քով : — Հում միս կեր : — Խեօնթ
ես , ի՛նչ ես : — Աս ի՛նչ կարճ դաս է : — Գիրքդ ո՞ւր է : —
Քաղցր ջուր կը խմես : — Միրգը ի՛նչ է : — Ո՛ւր աեղ հաց
կայ : — Այն աեղ ի՛նչ ունիս : —

Դ Ա Ս Գ .

Բարի տղան իր հայրը ու մայրը կը սիրէ , անոնց
խօսքը կը պահէ , վասն զի գիտէ որ անոնք ալ զինքը շատ
կը սիրեն : Մեր հայրը ու մայրը գիշեր ցերեկ մեր վրայ կը
հսկեն , մեզի համար կը յոգնին : Չանոնք որչափ սիրենք , քիչ
է : Երբ հիւանդ ըլլանք , անոնք մեզ կը խնամեն : Երբ անօթի
ըլլանք , անոնք մեզ ուտեստ կուտան : Ուստի պէտք է որ ,
երբ մենք մեծնանք և անոնք ծեր ու տկար ըլլան , մենք
ալ զիրենք խնամենք և յոգնինք անոնց համար :

Աստուած ըսած է . — Հայրդ ու մայրդ պատուէ , որպէս
զի քեզի բարիք դայ : Չար տղան իր հայրը ու մայրը չի
սիրեր , և Աստուած ալ զինքը չի սիրեր :



Դ Ա Ս Դ .

Ո Ր Կ Ր Ա Մ Ո Ղ Շ ՈՒՆԸ

Մէկը կար մէկը չի կար , շուն մը կար : Այդ շունը օր մը տեղէ մը կտոր մը միս գողցաւ ու բերնին մէջ առած՝ փախաւ : Ճամբան գետակ մը կար , որմէ պէտք էր անցնիլ : Շունը ջուրը մտաւ ու լողաց , որպէս զի դիմաց անցնի : Յանկարծ ջուրին մէջ ուրիշ շուն մը տեսաւ , որ իրեն պէս խոշոր կտոր մը միս խածած կը լողար : Շունը յանկարծ իր միսը թողուց ջուրին մէջ և միւս շունին վրայ վազեց :

Բայց գիտէ՞ք , գլխուն ինչ եկաւ : Զուրին մէջ տեսած շունը իր շուքն է եղեր . հոն ո՛չ շուն կար և ո՛չ միս : Այնպէս որ ագահ շունը , որ կ'ուզէր միւս միսն ալ առնել , վրայ տուաւ նաեւ իր միսը , զոր գետին ջուրը առաւ տարաւ :



ԴԱՍ Ե .

ԳԱՌՆՈՒԿՆ ՈՒ ԻՐ ՄԱՅՐԸ

Ինչո՞ւ կուլաս, խեղճ Գառնիկ :
— Շատ ծեծ կերայ ես, մայրիկ :

- Քեզ ո՞վ ծեծեց, իմ Գառնիկ :
- Կախարդ պառաւ մէկ կընիկ :
- Ի՞նչու ծեծեց քեզ, Գառնիկ :
- Կայի ծառին տակ, մայրիկ :
- Ինչո՞վ ծեծեց քեզ, Գառնիկ :
- Մեծ վայտով մը, իմ մայրիկ :
- Ո՞ր տեղ զարկաւ քեզ, Գառնիկ :
- Թաթիկներուս զարկաւ, իմ մայրիկ :
- Ի՞նչպէս լացիր դուն, Գառնիկ :
- Մէ, մէ, մէ, մէ, իմ մայրիկ :



Դ Ա Ս Զ .

Գ Ո Ղ Ե Ր Ն Ո Ւ Է Շ Ը

Նրկու գող տեղէ մը էջ մը գողցան . բայց եկու տես
որ, մէկը էջը պիտի ծախեմ, միւսն ալ պիտի հեծնեմ կ'ըսէր,

այնպէս որ 'կուի մը բրթաւ իրենց մէջ : Երբ իրենք , էջը թողած , կուուի մէջ էին , երրորդ գող մը վրայ հասաւ , կամաց մը իշուն վրայ հեծաւ ու առաւ փախաւ :

Բարոյական վարժութիւն . — Չարերը իրարու հետ չեն համաձայնիր : — Գէշ վաստակէն խեղ չկայ ⁽¹⁾ :

Բառական վարժութիւն . — Ի՞նչ է վանկը . — Ո՞ր բառերը միավանկ կ'ըսուին . — Միավանկ բառերու օրինակներ : — Երկու վանկով բառերու օրինակներ , նախորդ դասերուն մէջէն : Մէն մի բառի նշանակութիւնը բացատրել ու բացատրել տալ որչափ կարելի է մանրամասնաբար ու օրինակներով :

Դ Ա Ս Է .

Ճ Ա Ն Ճ Ն Ո Ի Մ Ե Ղ Ո Ի Ն

Օր մը մեղու մը ճանճ մը տեսաւ իր փեթակին քով . — « Հոս ի՞նչ գործ ունիս » , ըսաւ անոր բարկացած ձայնով . « Կորիւր ասկից , անշահ ճանճ , որ բզզալէ և ասդիէն անդիէն , աղտոտ տեղերէ ուտելիք ժողուելէ ուրիշ գործ չունիս » : — Ի՞նչ ընեմ , պատասխան տուաւ ճանճը , ի՞նչպէս կրնամ այնպէս կ'ապրիմ . բայց աղքատ ըլլալը յանցանք չէ , մինչդեռ հպարտ ըլլալը մեծ պակասութիւն է : ✓

(1) Դասառուն սոյն բարոյական վարժութիւնները պիտի ընդլայնէ աշակերտաց՝ ի հարկին , զանազան օրինակներով :

Բարոյական վարժութիւն . — Հպարտութիւնը և բարկութիւնը գէշ վարմունք են :

Բառական վարժութիւն . — Ո՞ր բառերը բազմաձևանկ կ'ըսուին . — Գտնել այս դասին մէջ մէկ , երկու և երեք ձևնկով բառեր :



Գ Ա Ս Ը .

Ա Ղ Օ Թ Ք Տ Է Ր Ո Ի Ն Ա Կ Ա Ն

Ո՛վ մեր հայրը , որ երկինքն էս , քու անունդ սուրբ ըլլայ , թագաւորութիւնդ թող գայ , ինչպէս երկինքի մէջ , նոյնպէս ալ երկրի վրայ քու կամքդ թող ըլլայ : Մեր

ամէն օրուան հացը աչտօր ալ տուր մեզ , և մեր մեղքերը ներէ մեզի , ինչպէս որ մենք ալ մեզի դէմ մեղք գործողներուն կը ներենք . մեզ փորձութեան մէջ մի ձգեր , հապաչարէն փրկէ զմեզ , վասն զի թագաւորութիւն , զօրութիւն ու փառք քուկդ են հիմայ և ամէն ատեն և յաւիտեան . Ամէն :


Առածներ . — Խեղրին՝ մէկը բաւ է , անխելքին՝ հազարը խեր չըներ : — Աւելորդ կահ կարասի , պատճառ է շատ վնասի :

Բաղադրութիւն . — Ուշադրութիւն , օգտակար , տգէտ , անօգուտ , հարկաւոր (1) :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Փոքրիկ տակառ մը ունիմ ճեփ ճերմակ ,
Եւ մէջի ջուրն է երկու տեսակ .
Աս ինչ է , տեսնեմ դուք պիտի գտնա՞ք :

(1) Դասատուն սոյն բառերուն իմաստը պիտի սովորեցնէ աշակերտաց հարկ եղած բացատրութիւններով ու օրինակներով :



Դ Ա Ս Թ .

Ա Ս Տ Ո Ւ Ա Ն

Ո՞վ խրատեց մերջիւնին
Գետինը ծակել ,
Բոլոր ամառ մեծ ջանքով
Պաշար հաւարել :

Ումէ՛ տառ , ինձ բռէք ,
Փորրիկ թըռչանը ,
Յարգէ , ճիւղէ և բըրբէ
Ճինեւ իր բոյնը :

Ո՞վ խրատեց մեզուն
Հրաշալի բանիւ ,
Ծաղկանց մեղր քաղել
Սնուչ ու ազնիւ :

Աստուած է այդ վարժապետ
Բարի , անսահման :
Ջանացէք միշտ կատարել ,
Իր սուրբ հրաման :

Դ Ա Ս Ժ .

Դ Պ Ր Ո Յ Ը

Ահաւասիկ դպրոցը , վարժապետը դաս կուտայ , տղաք , աչքերնին իրենց գիրքերուն վրայ , ուշադրութեամբ մտիկ կ'ընեն վարժապետին ըսածները : Մտիկ կ'ընեն , որպէս զի սովորին և երբ մեծնան , օգտակար մարդիկ ըլլան :

Տգէտը անօգուտ է ոչ միայն ուրիշներուն , այլ և ինքն իրեն :

Տղաք , առտուն երբ կ'ելլէք , սիրով դացէք դպրոց , վասն զի հոն է որ մարդ պիտի ըլլաք , հոն պիտի սովորէք բոլոր այն բաները , որոնք հարկաւոր են մարդուս :

Սիրեցէք դպրոցը :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Գլուխս կտրեցին ,
Սրտիկս հանեցին ,
Գինի խմցուցին ,
Լեզուս բացուեցաւ ,
Խօսիլ սկսայ :



Գ Ա Ս Ժ Ա .

Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ

Սիրուն անմեղ իմ գառնուկ ,
Բուրդըդ ճերմակ ու փափուկ ,
Դաշտ վազելով ու արօտ ,
Մօրըդ կը քաշես կարօտ ,
Մէ լար , գառնուկ սիրական ,
Փոքրիկ տըղու մը նման ,
Կուգայ մայրըդ , հետը շատ
Կը բերէ քեզ անուշ կաթ :

Բառական վարժուրիւն (¹). — Ժամ, Ժամացոյց :
Գործ, գործաւոր, գործունեայ, անգործ :
Խելք, խելացի, անխելք :
Միս, մսեղէն, մսավաճառ, մսակեր :
Ծաղիկ, ծաղկիլ, ճաղկավաճառ, ծաղկասէր :



Դ Ա Ս Ժ Բ .

ՉՍՏ ՉՍՏ ԵՒ ՄԻՍՍԻՆ

Մինաս ու իր քոյրը Աղանի իրարու հետ միատեղ կը խաղային : Մինաս իր հօլը կը դարձնէր . Աղանի ալ իր

(¹) Դասատուն սոյն ածանցումները մի առ մի բացատրէ ու բացատրել տայ աշակերտայ՝ ի նարկին ուրիշ օրինակներով :

տիկիննով կը խաղար : Մինաս Աղաւնիին բարկացաւ . — « Իմ հոլիս մի մօտենար , ինձի հետ մի խաղար , ըսաւ : — « Գուն ալ իմ տիկինիս ձեռք մի դպցներ » , սպտասխանեց Աղաւնի նեղացած :


Տղայք քիթերնին բերաննին թթուեցուցին , իրարմէ հեռացան ու սկսան առանձին խաղալ : Բայց մինակ սկսուած խաղը երկար չքշեց և մեր տղայք շուտով մէկդի նետեցին իրենց խաղալիկները :

Առածներ . — Նաւին ղէկ , մարդուն խելք :

Բառական վարժութիւն . — Գտնել հետեւեալ քառերէն շինուած ուրիշ բառեր ու անոնց նշանակութիւնը բացատրել :
Շաքար , Հաւ , Օր , Ճերմակ , Ճաշ , Աղօթք , Աշխատութիւն :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Օրան օրան ժուռ կուգայ ,
Ոտներ չունի ման կուգայ ,
Բերան չունի կուլ կուտայ .
Ըսէք տեսնեմ ի՞նչ է նա :



Դ Ա Ս Ժ Դ .

Մ Ե Ղ Ո Ի

Հա՛, ծագեցաւ արեգակը ,
Հա՛, ծագեցաւ մանիչակը .
Մեղուն թողուց իր փեթակը ,
Տըզտըզալով , տըզտըզալով :
Մեղուն թռաւ ծագէ՛ք ծաղիկ ,
Մեղր առաւ քաղցր-անուշիկ ,
Մոմը տարաւ հոտոտ , լուսիկ ,
Պըզպըզալով , պըզպըզալով :
Անուշ մեղրը՝ մանր տղոց ,
Դեղին մոմը՝ ամէն սրբոց :



Դ Ա Ս Ժ Դ .

Հ Ա Յ Ո Ւ Զ Ո Ւ Ր

Հացը մարդուս գլխաւոր ուտելիքն է : Հացը կը շինուի ալիւրէն , առաջ ալիւրը կը մաղեն , ետքը տաք ջրով կը շաղուեն , խմոր կը շինեն . խմորը շաղուելու ժամանակ հետը թըթ-խմոր կը խառնեն , ետքը վրան աղէկ մը կը գոցեն : Խմորը տաշտին մէջ քիչ քիչ կը քաջիտի : Հացագործը կ'առնէ հասած խմորը , անով կլըր կլըր գունտեր կը շինէ և

այդ գունտերը կ'եփէ փռան մէջ, որով կունենանք հացը :
Իսկ ջուրը մարդիկ չեն շիներ : Զուրը այնքան հարկաւոր
է մարդոց որ, Աստուած առատութեամբ կը բաշխէ զայն
հարուստին ու աղքատին : Մարդիկ խմելու ջուրը կ'առնեն
աղբիւրներէն ու գետերէն : Ուր որ աղբիւր կամ գետ չկայ,
հողը խորունկ կը փորեն, ջրհոր կը բանան և այս ջրհորէն
երած ջուրը կը խմեն : Մարդ առանց ջուրի չկրնար ապրիլ :
Կենդանիներն ալ ամբողջ պիտի մեռնէին՝ եթէ ջուր չ'ըլլար :

Դ Ա Ս Ժ Ե .

Դ Ա Պ Ա Ս Տ Ա Կ

Մի վազեր այդչափ ալ ազ ,
Իմ աղուորիկ Դապաստակ ,
Շատ ազատիկ ես տակաւին ,
Թաթիկներդ կը յօգնին :
Ես քեզ համար հաց բերեմ ,
Շաքարեղէն կերցնեմ ,
Մինչեւ մեծնաս զօրանաս ,
Յատկելով քովըս խաղաս :
Ծանր ծանր կը քալես ,
Սիրտս վեր վեր կը հանես ,
Կը թողում քեզ ապա ես ,
Կերթաս դաշտը կ'արածես :



Գ Ա Ս Ժ Զ .

Գ Ա Յ Լ Ն Ո Ի Գ Ա Ռ Ն Ո Ի Կ Ը

Ոչխարները իրենց գոմին մէջ փակուած էին : Անօթի
գայլ մը եկաւ գոմին տախտակներուն ճեղքերէն ներս նայե-
ցաւ՝ հասկնալու համար թէ ներսը ինչ կայ ինչ չկայ : Ան-

փորձ գառնուկ մը՝ որ գայլն ինչ է չէր գիտեր, անոր հետ
խօսքի բռնուեցաւ : — Հոս ի՞նչ գործ ունիք, ըսաւ որկրա-
մոլին : — Կակուղ ու թարմ խոտ ուտելու եկայ. ես քիչով
գոհացողներէն եմ : — Եթէ այդպէս է, պատասխանեց
գառնուկը, միասին արածինք » :

Խեղճ գառնուկն անմիջապէս դուրս ելաւ ու գայլը
պատառ պատառ ընելով լափեց զայն :


Բառոյական վարժութիւն . — Ինքզինքնին գովողներուն
գեղեցիկ խօսքերէն խաբուելու չէ : Մարդիկը պէտք է դա-
տել իրենց գործերուն համեմատ և ոչ թէ խօսքերուն :



Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Չորս եղբայրներ կան, որք իրարու ետեւէ կը վազեն,
բայց իրարու չեն համիր :

Առած . — Մէկ ըսէ՝ հինգ լսէ . հինգ չափէ՝ մէկ կտրէ :






Դ Ա Ս Ժ Է .

Ը Լ Լ Ա Լ ՈՒ Ե Ր Ե Ի Ն Ա Լ

Պզտիկ Խաչիկ օր մը սեղանի մը վրայ ելած կը գոչէր .
« Հայր, եկուր նայէ որչափ մեծ եմ » : Երբ սեղանէն վար
իջաւ, հայրը ըսաւ իրեն . « Այո՛, մեծ կերեւնայիր, վասն զի
սեղանին վրայ ելած էիր, բայց հասակդ պզտիկ է : Պէտք
է ըլլալ և ոչ թէ երեւնալ » :

Խաչիկ, որ փոքր էր, կուզէր մեծ երեւնալ . ըսել է
մնապարծ մըն էր : Տղաք պէտք է միշտ աշխատին գեղեցիկ
ձիւղքեր վաստկելու . բայց երբ ուզին շունեցածնին ցուցունել,
ժաղրելի կ'ըլլան :

Առած . — Օձը ծաղկէն թոյն կը շինէ, մեղուն մեղր :
Հաւը երբօր ջուր կը լամէ՝ վեր կը նայի :



Դ Ա Ս Ժ Ը .

Պ Ա Ռ Ա Ի Ն Ո Ի Ա Յ Ծ Ը

(Մ Ա Ն Կ Ա Ս Կ Ա Ն Ն Ե Բ Գ)


Պառան այժ մ'ունէր ,
Փոքրիկ սիրուն այժ .
Ինքն անով կ'ապրէր ,
Աղքատ մնացած ,
Խեղճուկ ու մինակ
Աղքատ մնացած :

Իր այծիկն օր մի
Նա դաշտը տարաւ,
Ի ծաղկանց հովաի
Արածել տուաւ,
Կուշտ կուշտ, կուշտ կուշտ
Արածել տուաւ :

Մարտ ամսի վերջն էր,
Յուրա հով մը վշեց,
Պառաւի աչքէն
Այծն հեռու վանեց,
Ափսոս, մեծ ափսոս,
Այծն հեռու վանեց :

Ի հարկէ դայլեր
Այծը լափեցին,
Խեղճուկ պառաւին
Կոտոշներ թողին,
Միայն և միայն
Կոտոշներ թողին :

Պառաւն էր նստած
Փունջ խոտը ձեռին :
Այծը կը կանչէր
Չայնով արտմագին .
— « Ե՛կ, Ե՛կ, Ե՛կ, Ե՛կ » —
Չայնով արտմագին :



Գ Ա Ս Ժ Թ .

Պ Ա Ր Ա Պ Հ Ա Ս Կ Ը

« Հայր , կ'ըսէր Յակոբ իւր հօրը . սա հասկերը , զոր քիչ ատենէն պիտի կտրեն , ամենքն ալ դէպի վար ծռեր են : Ինչո՞ւ միայն սա գլուխը վեր բռնէր է » : — Վասն զի , պատասխանեց հայրը , գլխուն մէջ պարսպ ու թեթեւ է : Պարսպ հասկը , տղաս , կը նմանի այն հպարտ անխելքին , որ ամէն տեղ գլուխը վեր կ'առնէ և կը հպարտանայ : Ընդհակառակն լեցուն հասկը աշխատասէր ու համեստ աշակերտին կը նմանի : Հպարտութիւնը միշտ անխելքութեան նշան է , իսկ համեստութիւնը ընդհանրապէս ճշմարիտ արժանիք մը կը ցուցունէ » :

Բառական վարժութիւն . — Ի՞նչ կ'ըսեն՝ կօշիկ շինողին , հագուստ կտրողին , կերակուր եփողին , կաթ ծախողին , գիրք ծախողին , երկաթէ բաներ շինողին :



Դ Ա Ս Ի .

Ա Ն Հ Ն Ա Ջ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ստեփան ամէն օր դպրոց երթալու համար կամուրջէ մը կ'անցնէր :

Մայրիկը միշտ կ'ըսէր իրեն . « Տղաս , կամուրջին եզերքէն վար մի ծուիր , ջուրը կ'իյնաս :

Բայց Ստեփան շատ կը փափաքէր պատին վրայէն գետը նայիլ և ինքնիրեն կ'ըսէր . — Կարելի է որ ջուրին մէջ ձուկեր կը տեսնեմ :

Օր մը Ստեփան կամուրջին եզերքն ելաւ , երկնցաւ ու սկսաւ նայիլ :

Բան մը չտեսաւ և ոտքը սահելով գետին մէջ ինկաւ :

Քանի մը հողի շուտ մը վազեցին ու Ստեփանը գետէն հանեցին . մարած ու կիսամեռ էր . ճակատը քարի մը զարնելով ծակած էր :

Այսպէս Ստեփան իր անհնազանդութեան պատիժը գտաւ և միտքը դրաւ անկէ ետքը մօրը պատուէրը պահել :

Բառական վարժութիւն . — Կամուրջը ինչ է . կամուրջը ինչէ՞ կը շինեն . կամուրջին եզերքը ինչ կ'ըլլայ :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Երկու քոյր կայ

Երկնից վրայ .

Մեծն առտուն կը ծնի ,

Իրիկուան կը մեռնի

Իսկ պզտիկը ամէն իրկուն

Կը ծնի ու կը մեռնի առտուն :

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ



Դ Ա Ս Ա .

Ճ Գ Ն Ա Ի Ո Ր Ն Ո Ի Ա Ր Ջ Ը

Քարայրի մը մէջ կը բնակէր ծերունի ճգնաւոր մը , որ ոչ ազգական ունէր և ոչ բարեկամ , անտառին խորը միս մինակ քաշուած կ'ապրէր և տարիներով մարդու երես չէր տեսած :

Խեղճ ճգնաւորը վերջապէս օր մը այս կեանքէն ձանձրանալով՝ անտառին խորը գնաց որ ուրիշ ընկեր մը գտնէ իրեն :

Մէյ մըն ալ ահագին արջ մըն է կ'ելէ դէմը : ձգնաւորին լեզին կը փրթի և վախէն « Բարև, պարոն արջ » կը պոռայ և մինչեւ գետինը կը ծռի . արջն ալ նոյն բանը կ'ընէ և անոր բարեւը կ'առնէ :

Այսպէս երկուքը իրարու բարեկամ կ'ըլլան անմիջապէս ու կ'երթան միասին լեռ ու ձոր պատիլ :

Յայտնի է որ մարդս արջէն շատ տկար է . մեր ճգնաւորն ալ արջէն առաջ յոգնեցաւ ու սկսաւ ճամբան ետ մնալ :

Երբ արջը ճգնաւորին յոգնութիւնը տեսաւ , մեղքցաւ ու ըսաւ . « Ի՞նչն եկուր սա ծառին տակ պառկէ քիչ մը , ես ալ քու քովդ կը կենամ մինչեւ որ յոգնութիւնդ առնես :

ձգնաւորին ուզածն ալ աս էր . անմիջապէս խոտերուն վրայ երկնցաւ ու քնացաւ . արջն ալ քովիկը նստաւ :

Մէյ մըն ալ անդիէն ճանճ մը եկաւ տըզտըզալով ու ճգնաւորին քթին վրայ կեցաւ :

Արջը այս որ տեսաւ թաթովը քշեց զայն որ երթայ . ճանճը թըռ ըրաւ փախաւ ու նորէն թռչելով իջաւ մարդուն քթին վրայ նստաւ . այն ատեն արջը ելաւ , խոշոր քար մը առաւ ու եկաւ ճգնաւորին քովը կեցաւ :

Մտքէն կ'ըսէր . « Կեցիր , անպիտան ճանճ , ես հիմայ քեզի կը սովբեցնեմ » :


Երբ ճանճը նորէն եկաւ ճգնաւորին երեսին վրայ , մեր արջն է քարը վերուց ու ճանճը սպաննելու համար ճգնաւորին ճակտին զարկաւ :

Ճանճը արդ ըրաւ փախաւ , բայց ճգնաւորը մեռաւ :

Անխելք բարեկամ մը եթէ աղէկութիւն ալ ընել

ուղէ՛ գէշութիւն կ'ըլլայ : Խեղացի թշնամին անխելք բարեկամէն աղէկ է :

Բառական վարժութիւն . — Շարաթը քանի՞ օր է և օրերուն անունները ի՞նչ են : — Օրը քանի՞ ժամ է :



Դ Ա Ս Բ .

Մ Ա Մ Ո Ւ Կ Ն Ո Ւ Շ Ե Ր Ա Մ Ը

Մամուկը շերամը ծաղրելով կ'ըսէր . — «Տէր Աստուած , ձեռքդ սրչափ ծանր է , սկսած գործդ օրերով չես լմնցընէր : Տես , ես քանի մը վայրկեանէն ամբողջ պատը անհամար ցանցերով կը գոցեմ : — Անանկ է , պատասխանեց շերամը . բայց քու շինած ցանցդ շուտով կը փրթի . ասկէց զատ բանի մըն ալ օգուտ չունի , մինչդեռ իմ շինածս թէ դիմացկուն է և թէ օգտակար : Ինչ գործ կ'ընեմ , բայց աղէկ կ'ընեմ :

Շատ ու շուտ ընելը չէ որ գովելի է, այլ գործին ազէկութիւնը : Մարդս շերամին պէս ինչ որ ընէ թող ազէկ ընէ :

Բառական վարժութիւն : — Մամուկ . — Շերամ . — Յանց . — Մամուկը ի՞նչ կը շինէ : — Շերամը ի՞նչ կը շինէ :

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

- Երկու եղբայր շատ փնտռուած ,
Երկուքն ալ մէկ մօրէ ծնած .
Մեծին փոքր է պատիւն ու գին ,
Իսկ փոքրն յարգի ու թանկագին :
-

Գ Ա Ս Գ .

Գ Ի Ի Ղ Ա Ց Ի Ն Ո Ի Չ Մ Ե Ր Ո Ի Կ Ը

Գիւղացիին մէկը պարտէզ մը մտաւ ձմերուկ գողնալու : Սողալով մտեցաւ ձմերուկի արտին ու ինքնիրեն կըսէր . « Հիմայ տուպրակ մը ձմերուկ կը գողնամ ու կը տանիմ կը ծախեմ . ան ստակով հաւ մը կ'առնեմ : Հաւը հաւկիթ կ'ածէ , թուխս կը նստի , ձագեր կը հանէ : Չագերը

կը մեծցնեմ, կը ծախեմ ու խող մը կ'առնեմ: Խողը մէկ տարուան մէջ տասը քսան ձագ կը ծնի ու կը շատնայ: Խողին ձագերը կը ծախեմ, մատակ ձի մը կ'առնեմ. ձին քուրակ կը ծնի: Քուրակը կը մեծցնեմ, սուղ գինով կը ծախեմ, տուն մը կ'առնեմ և առջևը պարտէզ կը շինեմ, ձմերուկ կը ցանեմ և պահապաններ կը դնեմ որ ձմերուկները չգողնան. ես ալ կամաց մը կուգամ ու կը պուտամ. «է՛յ, պահապաններ, պարտէզը գողեր մտան, ձմերուկները չգողնան» : Գիւղացին իր երևակայութեան մէջ այնքան ընկրդմած էր որ, ուրիշին պարտէզին մէջ ըլլալը մոռցաւ ու այս խօսքերը բարձրաձայն պուտաց : Պարտիզպաններն ալ արթնցան, եկան հասան, զինքը բռնեցին ու աղուոր ծեծ մը քաշեցին :

Առածներ . — Աղջիկ՝ քեզ կ'ըսեմ, հարսնուկ դուն լսէ :

Ջուրի կուժը ջուրի ճամբան կը կտորի :

Գայլին անունն է ելեր, աղուէսը աշխարհ քանդեց :



Դ Ա Ս Դ .

Մ Ե Ղ Ո Ի Ն Ո Ի Ճ Ա Ն Ճ Ը

Մ Ե Ղ Ո Ի

Գարուն , ամառ ամէն օր ,
Ես կը գնամ գաշտ ու ձոր ,
Կ'աշխատիմ ես միշտ անվերջ
Միշտ փնտռեմ ծաղկանց մէջ .
Եւ գտածս շիփ շիտակ
Իսկոյն կը տանիմ փեթակ .
Ու երբ փչէ ցուրտ քամին ,
Ծաղիկները թառամին ,
Ես ձմեռը պաշարով
Կ'ըլլամ խապառ ապահով :

Ճ Ա Ն Ճ

Փոքրիկ ճանճ եմ զուարճասէր ,
Միշտ կը թռչիմ վար ու վեր .
Մի մեծ տան մէջ , մի բակին ,
Սաստիկ արեւուն տաքին :
Կեր ու խումէ , խաղէ զատ
Ուրիշ բանի չեմ ատակ .
Եւ ներկայով բաւական .
Միտք չեմ բերեր ուրիշ բան :

Դ Ա Ս Ե .

Խ Օ Ս Ք Մ Տ Ի Կ Չ Ը Ն Ե Լ

Աքաղաղն ու հաւը եղբայրացան : Աքաղաղը այգի գընաց և սկսաւ խակ պտուղներ ուտել : Հաւը կ'ըսէր անոր . « Մի ուտեր , եղբայր , սպասէ որ հասուննան : » Աքաղաղը մտիկ չըրաւ և այնքան կերաւ որ , հազիւ կրցաւ տուն երթալ :
— « Վայ , քուրիկ , փորս կը ցաւի » կ'ըսէր աքաղաղը : Հաւը անոր անանուխի կաթիլներ խոցուց , շաղուած մանանեխ դրաւ վրան ու ցաւն անցաւ :

Աքաղաղն առողջացաւ ու դաշտ գնաց : Այն տեղ շատ թռչտեցաւ ու վազվզեց և արիւն քրտինք մտած՝ ազբիւրին մօտեցաւ ու կ'ուզէր պաղ պաղ ջուր խմել : Հաւը խրատ կ'ուտար անոր . « Մի ընէր , եղբայր , կ'ըսէր , սպասէ , քիչ մը հանգչէ , ետքը կը խմես » : Աքաղաղը մտիկ չըրաւ , պաղ ջուրը խմեց ու սկսաւ դողդղալ : Մեծ դժուարութեամբ կրցան տուն տանիլ զինքը : Հաւը վազեց բժիշկ բերաւ : Բըժիշկը լեղի դեղեր գրեց : Աքաղաղը օրերով անկողնի ծառայեց :

Չմեռուան մօտ աքաղաղը ազեկցաւ ու գնաց գետին եզերքը խաղալու : Գետին երեսը բարակ սառոյցով պատած էր . Ուզեց սառոյցին վրայ սահնակ խաղալ : Հաւը նորէն խրատեց զինքը . « Մի ըներ , եղբայր , դեռ բարակ է , կը կտորի ու կը խղզուիս » : Բայց աքաղաղը մտիկ չըրաւ ու սկսաւ սահնակ խաղալ : Յանկարծ սառոյցը կտորեցաւ և անհնազանդ աքաղաղը ջուրը ինկաւ ու խղզուեցաւ :



Գ Ա Ս Զ .

Զ Ո Ւ Ա Ն Ը

Երկու փոքր տղայք, Կարապետ ու Գրիգոր, ճամբան հին չուան մը դասն և սկսան իրարու հետ կռուիլ և անանկ պօռալ որ, իրենց աղաղակներովն ձորն ու լեռը կը դնդա-
ցընէին : Կարապետ չուանին մէկ կողմէն բռներ էր, Գրիգոր
ալ միւս ծայրէն, և իւրաքանչիւրը կը ջանար ընկերոջը ձեռ-

քէն յափշտակել զայն . քանի՛ քանի՛ անգամներ զիրար գետինն ձգեցին ու նորէն ոտք ելան . վերջապէս այնքան քաշեցին որ , չուանը փրթաւ և երկուքն ալ գետինն ինկան ու տիղմին մէջ գլորեցան :

Այն միջոցին մարդ մը վրայ գալով՝ տեսաւ անոնց վիճակը և սկսաւ հայրաբար ըսել իրենց .

« Ահա՛ իրարու հետ կռիւ ընողներուն գլխուն եկածը միշտ աս է . կռիւը գէշ բան է , մարդս ամէն ատեն բարեկամութեամբ վարուելու է ուրիշներուն հետ » :

Տղայք ոտք ելան , զգետնինն բոլորովին տիղմն էր թաթխուեր . կրցածնուն չափ մաքրեցին ու իրարու ձեռք բռնելով՝ հաշտուեցան և խօսք տուին բարի ծերունիին որ մէյ մըն ալ իրարու հետ չկռուին :

Գ Ա Ս Է .

Մ Ե Ր Տ Ո Ւ Ն Ը

Մեր տունին մէջ շատ մը բաներ կան . օրինակի համար սեղան , աթոռ , պահարան , թիկնաթոռ . ասոնք կարասիներ են : Կան նաեւ գաւաթներ , շիշեր , պնակներ , կուժեր . ասոնք ալ ամաններ են : Կան դարձեալ հաց , միս , մածուն , պանիր . ասոնք ալ ուտելիքներ են : Կայ ջուր , գինի , կաթ . ասոնց ալ լամելիք կ'ըսեն : Ասոնցմէ զատ կան կատու , շուն , հաւ , աքաղաղ . ասոնք ալ կենդանիներ են : Խոհանոցին մէջ կան կացիններ , դանակներ , դգալներ , պատառաքաղներ . ասոնք ալ գործիքներ են :



Դ Ա Ս Ը .

Տ Ղ Ա Ն Ո Ւ Շ Ե Ր Ա Մ Ը

«Նրանի՛ թիթեռնիկին, որ օդին մեջ կը թռչի», կ'ըսէր
աղայ մը, որ դպրոցէն ձանձրացեր էր : Իսկ ես գիշեր ցե-

րեկ անընդհատ կ'աշխատիմ. աս քաշելու բան է» : Ետքը
Շերամին գարձաւ ու ըսաւ, «Դու ի՞նչ խելքով ասանկ
գիշեր ցերեկ կը հիւսես» : Շերամը պատասխանեց, «Ուրա-
խութեամբ կը հիւսեմ, որպէս զի անոր մէջ թիթեռնիկ ըլլամ» :

Թիթեռնիկ ըլլալու համար Շերամը շաբաթներով կը
հիւսէ : Դպրոցականէ մը պահանջուած զոհողութիւնը աւելի
թեթեւ է : Կը բաւէ որ օրը քանի մը ժամ միայն ուսման
պարապի : Եթէ աղէկ մտածէ, պիտի տեսնէ որ իր շահուն
համար է որ կ'ստիպեն զինքը դասերը սովորիլ, ու վիճակէն
չպիտի տրանջայ :

Առածներ . — Աղուէսը խաղողին չէ հասէր, «խակ» է
ըսեր է : — Բարի ծառը՝ բարի պտուղ կը բերէ :

Բառական վարժութիւն . — Ի՞նչ կ'ըսեն աշխատու-
թիւնը չսիրողին . — Բան չգիտցողին . — Համբերութիւն
չունեցողին . — Խօսք մտիկ չընողին . — Յանցանք գործողին .
— Աստուծոյ վախցողին . — Աղէկութիւն ուզողին . — Գէշու-
թիւն ուզողին :

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Քար քարի վրայ՝ քար չէ, լեռ սար կ'արածի՝ դուար
չէ, հաւկիթ կ'ածէ՝ հաւ չէ :



Դ Ա Ս Թ .

Ա Յ Գ Ի Ն

Այգեգործ մը , որ իր մահուան անկողնին մէջն էր ,
զաւակներուն ըսաւ .

“Սիրելի զաւակներս , մեր բնակած փոքրիկ տունէն և
անոր քովի այգիէն զատ ժառանգութիւն մը չունիմ ձեզ
ձգելու : Բայց այդ այգիին մէջ թաղուած գանձ մը կայ =
Այգին փորեցէք ու պահուած գանձը կը գտնէք” :

Հօրերնուն մեռնելէն վերջը , տղաքը սկսան ամենամեծ
եռանդով հողը տակն ու վրայ ընել , բայց ո՛չ ոսկի գտան
և ո՛չ արծաթ : Սակայն երբ աշունը եկաւ , այգին , զոր
աղէկ մը պեղած էին , առաջուրնէ շատ աւելի խաղող
տուաւ , որով իրենց հասոյթը կրկնասպառկեցաւ :

Տղաքը այն ատեն հասկեցան թէ իրենց հայրը ի՞նչ ըսել

ուզեր էր՝ այդիին մէջ թաղուած դանձ մը կայ ըսելով, և այդիին դրան վրայ խոշոր գրերով սա խօսքը գրեցին .

«Ամենէն ամուլ դաշտին մէջն անգամ ոսկիի հանք մը կայ, բայց աշխատութեամբ միայն կարելի է այն դանձը երեւան հանել» :

Առածներ . — Աւելի աղէկ է քիչ մը նեղութիւն կրել, քան թէ ուրիշին նեղութիւն պատճառել : — Հայտութիւնը վայելողինն է, և ոչ թէ հաւաքողին : — Մի՛ յանդիմանիր մտնել այն ջուրին մէջ, որու յատակը չես տեսներ :

Գ Ա Ս Ժ .

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Խ Ր Ա Տ Ն Ե Ր

Սիրէ քու ընկերդ քու անձիդ պէս : Մի՛ ըներ ուրիշին ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն . բայց ինչ որ կ'ուզես որ ուրիշները քեզի ընեն, դու ալ անոնց ըրէ :

Մի՛ջտ քու թշնամիներդ սիրէ . քեզ ատողներուն աղէկութիւն ըրէ և քեզ հալածողներուն ու զրպարտողներուն համար աղօթէ . ասանկով պիտի ցուցունես որ քու երկնաւոր Հօրդ զաւակն ես, վասն զի Աստուած իր արեւը կը ծագէ թէ բարիններուն և թէ չարերուն վրայ և իր անձրեւը կը տեղայ արդարին և մեղաւորին վրայ :

Վրէժխնդրութիւն մի՛ ըներ, և ուրիշին քեզի ըրած չարիքը մոռցիր :

Ինչպէս պիտի համարձակիս Աստուծոյ ողորմութիւնը խնդրել, թէ որ դու ուրիշին դէմ ոխ պահես . ինչպէս պիտի կրնաս անկէ թողութիւն խնդրել, երբ դու ուրիշին չես ներեր :

Մի ըսեր թէ՛ ուրիշները ինծի հետ ինչպէս որ վարուեցան, ես ալ անոնց հետ անանկ պիտի վարուիմ, և իւրաքանչիւրը ինծի ինչ որ ըրաւ՝ ես ալ անոր ան պիտի ընեմ : Չարիքի դէմ չարիք և նախատինքի փոխարէն նախատինք մի ըներ . ընդհակառակն չարէն վրէժդ ան բարիք ընելով և նայէ որ բարիք ընելով յաղթես անոր :

Ամենուս հայրը մէկ է, վասն զի մեզ ամենքս Աստուած ստեղծեց . մենք ամենքս մէկ ու մեծ ընտանիք մըն ենք :

Գ Ա Ս Ժ Ա .

Գ Ո Ր Տ Ն Ո Ւ Ե Ձ Ը

Գորտին մէկը որ մը եզ մը տեսաւ և անոր հասակին շատ հաւնեցաւ : Ինքը, հազիւ հաւկիթի մը չափ կար . նախանձէն սկսաւ փշուիլ, փշուիլ, ուռենալ և եզին չափ խոշորնալու աշխատիլ . իր քովը կեցող ուրիշ գորտի մը կը հարցնէր, «քուրիկ, ինծի նայէ, պէտք եղածին չափ մեծցայ, կը բաւէ» — Ո՛չ, — Ուրեմն դեռ ուռենամ, հիմայ, — Ամենեւին : — Է՛յ հիմայ : — Դեռ շատ հեռու ես» : Անմիտ կենդանին այնքան ուռեցաւ, որ վերջապէս պայթեցաւ :

Աշխարհի մէջ ալ այս գորտին նման անմիտ մարդիկ
լեցուն են : Կ'ուզեն ուրիշներուն նմանիլ, և չկրնալով՝ ծաղ-
րելի կ'ըլլան :

Մեր փափաքները չափաւորենք :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Երկու հովիւներ, Մկրտիչ և Յակոբ, դաշտէն միասին
տուն կը դառնային : — Գիտե՞ս, Մկրտիչ, ըսաւ ընկերը
եթէ քու ունեցած ոչխարներէդ մէկը ինծի տաս, իմիններս
քուկիններէդ երեք անդամ՝ շատ կ'ըլլան : — Ո՛չ, ըսաւ
Մկրտիչ, դուն քու ոչխարներէդ մէկը ինծի տուր, այն
ատեն երկուքս ալ հաւասար կ'ունենանք » : — Հովիւներուն
իւրաքանչիւրը քանի՞ ոչխար ունէր :

Դ Ա Ս Ժ Բ .

Խ Ր Ա Տ

Մի ինգրեր Աստուծմէ
Ո՛չ փող, ո՛չ պատիւ,
Այլ քեզ կրթելու
Խելք, շնորհք, սիրտ ազնիւ :

Երբէք մի պարծիր
Թէ շատ գիտուն ես,
Ո՛րքան բան սովորիս,
Այն օգուտ է քեզ :

Օգնող եղիր քո ընկերաց,
Աղքատներու Սէր ցուցուր .
Մեր Տէրն ըսաւ թէ չէ անվարձ
Նաեւ բաժակ մի ցուրտ ջուր :

Առածներ . — Ուրիշին աչքը քեզի համար լոյս չտար :
— Անխելք մարդուն ընդուն երկար կ'ըլլայ : — Գէշ ընկեր-
ներէ փախչողը իր ճամբան շիտակ կը գտնէ :

Բառական վարժութիւն . — Ըսէք թէ ի՞նչ կ'ընե՛յ դա-
նակով, գրիչով, ասեղով, աչքով, կրակով, գաւաթով,
աւելով, խողանակով, սանտրով, աճառով, քանակով,
մկրատով, դոյլով, կացինով, ձիով, շոգենաւով, բանալիով,
գիրքով, ակռայով, քիթով, ոտքով, ականջով, պատառա-
քաղով :



Գ Ա Ս Ժ Գ .

Վ Ա Խ Կ Ո Տ Տ Ղ Ա Ն

— Ես շատ քաջ եմ, կ'ըսէր Մանուկ իր մօրը, բանէ մը չեմ վախնար և գիշերը մութին ամէն տեղ կրնամ պոտիլ :

Բայց Մանուկ պարծենկոտին մէկն էր : Գիշեր մը քնացած ատեն յանկարծ արթնցաւ . աչքին անանկ երեւցաւ որ պատուհանին մէջէն կրոր ու փայլուն գլխով ճերմակ կին մը իրեն կը նայի : Մանուկ լիզապատառ եղաւ, գլուխը վերմակին տակ քաշեց ու պռուպ .

— Մայրիկ, մայրիկ, հասիր :

Խեղճ մայրը դող ելած անոր քով վազեց :

— Մայրիկ, ըսաւ Մանուկ խեղդուկ ձայնով, սենեակնիս փեղի կայ, աչքովս անսայ :

Մայրիկը սկսաւ քահ քահ խնդալ ու ըսաւ .

— Է՛հ, հապա դու կ'ըսէիր որ քաջ ես, քաջութիւնդ ուր է . մեղք քեզի, շուքէդ անգամ կը վախնաս : Հանէ

նայիմ գլուխդ դուրս, կտրիճ աղայ. եկն՝ը մեկտեղ սա
փերին բռնենք ու ծեծենք :

Մանուկ կամաց մը գլուխը դուրս հանեց և ինչ տեսնէ
աղէկ :

Փերի կարծածը վարագոյրն էր, որոյ վրայ լուսինն իր
լոյսը զարկեր էր, իսկ ճերմակ փայլուն գլուխն ալ լուսինն
էր, որ վարագոյրին ետեւէն կ'երեւնար :

Մայրիկ, ըսաւ Մանուկ՝ մայրը համբուրելով, ուրիշ
անգամ մեծ մեծ չպիտի ջարդեմ, հապա անվախ ըլլալու
պիտի աշխատիմ :

Դ Ա Ս Ժ Դ .

Ե Ղ Բ Ա Յ Ր Ա Կ Ա Ն Ս Է Ր

Եղբայրներն պէտք է մէկզմէկ սիրեն, ինչու որ անոնք
մէկ արմատէ բուսած ճիւղերու կը նմանին :

Եթէ եղբայրդ քեզի բարեկամ չէ, ո՞վ ուրեմն բարե-
կամ պիտի ըլլայ քեզ աշխարհիս վրայ :

Եղբայրները մէկ ծնողաց զաւակներ են, միեւնոյն մօրը
կաթը ծծեր են, միեւնոյն հայրը զանոնք զգուէր է իր
թեւերուն մէջ :

Անոնց օրօրոցները քովէ քով չէին միթէ. սեղանին վրայ
միատեղ կերակուր չէին ուտեր :

Ո՞վ որ իր հայրն ու մայրը կը սիրէ, եղբայրներն ու
քոյրերն ալ կը սիրէ :

Ուրեմն եղբայրս իմ ամենէն ընտիր բարեկամս պիտի ըլլայ և քոյրս ամէն անձէ աւելի պիտի սիրեմ :

Ուրախ չի պիտի ըլլամ, երբոր եղբայրներս ու քոյրերս արտմութեան մէջ ըլլան . երբ ինծի կարօտին, ունեցածովս պիտի օգնեմ իրենց՝ կարողութիւնս որչափ ալ որ քիչ ըլլայ . անոնց դէմ չի պիտի փակեմ ո՛չ տունս և ո՛չ սիրտս :

Մտածեցէք թէ հայր մը ինչ ցաւ պիտի զգայ, և մօր մը սիրտը ի՞նչ կոծերով պիտի լինայ, երբ իմանան թէ իրենց զաւակները, զորս իրենք այնքան գոյրովանօք կը սիրեն, զիրար չեն սիրեր :

Կ Ա Ղ Ն Ո Ի Կ Ո Յ Ր Ը

Կաղն ու կոյրը մեծկակ առուակէ մը պիտի անցնէին : Ի՞նչպէս ընէին : Կոյրը շալկեց կաղը և երկուքն ալ ապահով անցան առուակէն :

Առաձներ . — Աշխատութեան ժամանակ վաստկողը, չատ բան կը վաստկի :

Քիչ խօսէ ու կարճ կապէ :

Մէկ ստակը չի հաշուողը կէս ստակ չալ թէր :


Բան չգիտցողը ամէն բանի կը հաւատայ :



Դ Ա Ս Ժ Ե .

Ա Ռ Ա Ի Օ Տ

Փալիլուն ճաճանչով արեւելք լցաւ ,
Գետի մօտ գիւղի կրակ մարեցաւ .
Դաշտի ծաղիկներ ցօղով ցօղուեցան ,
Դուար ու ոչխար արօտը ելան :
Թանձր մառախուղք երկրէն հեռացան ,
Ամէն կենդանիք դաշտը լցուեցան .
Արթնցան մարդիկ , սկսան գործի ,
Ծագեց արեւը , աշխարհ կը բերկրի :



Դ Ա Ս Ժ Զ .

Դ Տ Ա Մ Դ Ք Ո Ւ Կ Դ Ձ Է

Պետրոս ուրախ զուարթ ցատկոտելով տուն կերթար :
 Ոտքը յանկարծ բանի մը զարկաւ : Պետրոս ծռեցաւ
 ու տեսաւ արծաթ հինգնոց մը , նոփղնոր , որ փոշիին մէջ
 կը փալփէր :

— Ի՞նչ ուրախութիւն , ըսաւ , այս ստակով շաքար
 կ'առնեմ , թէ որ մայրիկս հրաման տայ :

Բայց Պետրոս քիչ մը մտածեց ու ինքնիրեն ըսաւ :

— Բայց այս ստակը իմն չէ : Քիչ մը առաջ տեսայ որ
 Սուրբիկ իր հիւանդ մօրը համար երկու դահեկանի կաթ
 առնելու կ'երթար , անշուշտ այս ստակը ան կորսնցուցած
 պիտի ըլլայ :

Եւ բարեսիրտ Պետրոս վազեց Սուրբիկի ետեւէն : Խեղճ

աղջիկը կուլար, վասն զի ստակը կորսնցուցեր էր և մայրը շատ աղքատ էր :

— Մի՛ լալ, պրուայ Պետրոս. ես գտայ ստակդ. ահա՛, սու նայիմ :

Սուրբիկ թէ կուլար և թէ կը խնդար ստակը գտնելուն համար : Շատ շնորհակալ եղաւ Պետրոսին և ստակն առնելով վազեց որ մօրը կաթ գնէ :

Պետրոս Սուրբիկէն աւելի երջանիկ էր, ինչու որ պարտականութիւն մը կատարելը շատ անուշ բան է :

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Մէկը կայնած կը խօսի, երկուքը ականջ կը դնեն, իսկ երկուքը կը նային :

Ի Բ Ի Կ Ո Ւ Ս Ն Ս Ա Ղ Օ Թ Բ

Տէր իմ Աստուած, Տէր բարերար,
Գու պահպանէ զիս այս գիշեր,
Տուր հօրս և մօրս կեանք երկար,
Եւ երջանիկ հանգիստ օրեր :

Քու սուրբ հրեշտակդ մեր մօտէն
Ձը հեռանայ ամենեւին,
Այլ պահէ միշտ փորձանքներէն,
Արթնցնէ զուարթագին :



Գ Ա Ս Ժ Է .

Վ Ա Ր Դ Ե Ն Ի Ն

Գարեգին թաղարի մը մէջ փոքրիկ վարդենի մը տնկեր էր : Ամէն իրիկուն , երբ գիշերուան օդը կը ցրտէր , խնամքով վարդենին ներս կ'առնէր ու իր սենեակը կը պահէր : Սակայն իրիկուն մը այս նախազգուշութիւնն աւելորդ համարեց , վասն զի օդը կակուղ ու հանդարտ կ'երեւնար , բայց հետեւեալ առտուն վարդենին չորցեր էր :

Մէկ օրուան անհոգութիւնը կրնայ երկար ատենուան աշխատութեան պտուղը չորցնել ոչ միայն վարդենիին համար , այլ և սրտի ու մտքի ձիւղբերուն համար , որոնք նոյնպէս ծաղիկներ են , որք յարատեւ ուշադրութեան կը կարօտին : Ամէն վայրկեան պէտք է հսկենք ինքզինքնուս վրայ :

Բառակիան վարժուիլն . — Ի՞նչ է վարդը : — Վարդի ծառը ի՞նչ կը կոչուի : — Ի՞նչ է տանձը . — Տանձի ծառը ի՞նչ կը կոչուի : — Ի՞նչ է հաւը . — Հաւուն բնակած տեղը ի՞նչ կը կոչուի : — Հաւնոցին մէջ ուրիշ ո՞ր կենդանիները կը բնակին : — Հաւուն ձագին ի՞նչ կ'ըսեն :

Դ Ա Ս Ժ Ը .

—

Հ Ա Յ Ր Ո Ի Մ Ա Յ Ր

Պատուեցէք ձեր հայրն ու մայրը , որ աշխարհի մէջ շատ ապրիք :

Տղաք , հնազանդեցէք ձեր ծնողաց , երբ բան մը հրամայեն ձեզ :

Հօրերնուդ խօսքը մտիկ ըրէք , ինչու որ այն ձեզի Աստուծոյ հրամանով կեանք տուաւ , ու մտքերնիդ բերէք ձեր մօրը քաջածները , երբ տակաւին փոքր էիք : Իր հայրն ու մայրը անարդողը՝ մարդ կոչուելու արժանի չէ : Բայց ով որ իր հայրն ու մայրը կը պատուէ , օր մը իր զաւակներուն վրայ պիտի ուրախանայ :

Ձեր գործերովը , խօսքերովը և ամէն մէկ շարժուածքներովը պատուեցէք ձեր ծնողքը , որ անոնց օրհնէնքը իջնէ ձեր վրայ ու միշտ ձեր գլուխը մնայ : Հօր մօր օրհնէնքը տղոց տունը կը հաստատէ , և անոնց անէծքը տակն ու վրայ կ'ընէ զայն :

Օգնեցէք ձեր ծնողաց՝ անոնց ծերութեան ատեն , ինչպէս որ անոնք ձեզի օգնեք են ձեր տղայութեան ատեն :

Թէ որ տկար ու անզօր են , նեցուկ եղիք իրենց . մի արհամարհէք զանոնք՝ ինքզինքնիդ իրենցմէ աւելի խելացի կարծելով , և ինչ որ ընէք անոնց համար՝ չպիտի կորսուի , ու ձեր բոլոր քաջածներուն վարձքը Աստուծոմէ պիտի գտնէք :



Դ Ա Ս Ժ Թ .

Գ Ա Ր Ո Ւ Ն

Կարօտ ենք տեւքիդ , աննման դարուն ,
Շուտ եկուր ու բեր մեզ ծաղիկ սիրուն .
Բեր պայծառ արեւ , բեր մեզ տաք օրեր ,
Ճրվլրտող թռչուն , բեր կանանչ դաշտեր .
Բաց մեր դռները , բաց մեր պատուհան ,
Թող բացուին , ծաղկին վարդ , մելսակ , շուշան .
Փակուած սենեակէն իջնենք , զբօսուուք ,
Կանանչ դաշտ երթանք , խաղանք գլորուինք :

ՄԵԾԸ ՊԶՏԻԿԻՆ ՊԵՏՔ Է ՕԳՆԷ

Ագարակ մը կար, որու մէջէն գետ մը կ'անցնէր. այն-
քան շատ անձրեւ եկեր էր որ, գետը յորդեր էր :

Ագարակապանին որդին՝ փոքրիկ Պօղոսիկ, գետին առջեւ
կը գտնուի ու կանկ կ'առնէ :

Պօղոսիկ շատ կը վախնայ և տուն երթալու միջոց կը
փնտռէ : Այն միջոցին կ'անցնի անկէ Պօղոսիկի մէկ ընկերը,
որ իրմէ աւելի մեծ և ուժեղ էր : Պօղոսիկը կռնակը կ'առնէ
ու դիմացի եզերքը կ'անցնի գոռացող ջուրին մէջէն :

Դ Ա Ս Ի .

Ա Գ Ա Հ Ի Ն Կ Ա Պ Ի Կ Ը

Ատենով հարուստ մարդ մը կար, բայց այնքան ազահ,
որ երբէք աղքատի մը ստակ չէր տար : Աժան գնով կա-
պիկ մը գնէր էր, յուսալով որ կրնայ աւելի սուղ ծախել
զայն ուրիշի մը :

Օր մը այս քարսիրտ ազահը դուրս ելեր էր . կապիկը
տեսաւ որ քովի տունի դրացին փողոցէն անցնող աղքատի
մը քառսուն փաքանոց մը կը նետէ պատուհանէն, անմիջա-
պէս տիրոջը սնտուկը բացաւ և սկսաւ լիաբուռն ոսկի և
արծաթ նետել պատուհանէն :

Շատ մարդիկ վազեցին, կրցածնուն չափ ժողուեցին ու անցան գացին :

Մնառուկը գրեթէ պարպուէր էր, երբ ազահը փողոցէն եկաւ և սոսկումով տեսաւ եղածը :

«Ո՛հ, գարշելի՛ բան . ո՛հ, անիծանձ կենդանի», կը գոչէր հեռուէն կապիկին սպառնարով :

Բայց դրացին՝ կատղած ազահին ըսաւ .

«Մի բարկանար, բարեկամ . իրաւ է որ կապիկիդ պէս ստակը պատուհանէն նետելը խենդութիւն է, բայց քեզի պէս սնաուկին մէջ դիզելն ալ խեղացութիւն չէ» :

Բառական վարժուրիւն . — Ի՞նչ է խորովածը, սերը՝ թէյը, կաթը, զմեղին, ասեղը, օրօրոցը, նստարանը, սկաւառակը, բաժակը, աղը, սագը, մուկը :

Ա Ն Ձ Ր Ե Ի

Անձրեւ, անձրեւ, վար եկուր,
Յորեն ու գարի բըսցուր .
Բըսցուր ծաղիկ, կանանչ խոտ,
Աւլէ՛ փոշի, մաքրէ՛ օդ :

Անձրեւ, անձրեւ, վար եկուր,
Ու տուր մեզի կերակուր :



Դ Ա Ս Ի Ա .

Ա Ղ Օ Թ Ք

Փանք քեզ Աստուած իմ ,
Որ տուիր այսօր ,
Ինչպէս յարածամ ,
Ինծի կերակուր :

Շնորհացդ ցօղէն
Կաթէ իմ վրայ ,
Որ հոգիս անրիծ ,
Սիրալս սուրբ ըլլայ :

Լոյս տնւր իմ մտքին
Եւ ուղիղ ճամբան
Ցուցուր , որ մանկիկ
Քայլերս ընթանան :

Այն ճամբան ուսկից
Երկինք կ'ելլուի,
Եւ ուսկից գալողն
Գիրկըդ կը հանդչի :

Տղա՛ք, ձեր ազօթքը ուղղեցէք Աստուծոյ, որպէս զի
առաքինութեան առաջնորդէ զձեզ :

Առաքինի տղան առտուրնէ իր միտքն առ Աստուած կը
բարձրացնէ . անոր դէմը կը կենայ և սիրտը կը բանայ անոր :

Աստուած ինքը ըսած է . « Խնդրեցէք և պիտի տրուի
ձեզ, փնտռեցէք ու պիտի գանէք, դուռը զարկէք ու պիտի
բացուի ձեզ » :

Խոնարհին ազօթքը մինչեւ Աստուծոյ աթուռ կ'ելլէ :

Ձեր ազօթքին մէջ շատախօս մի՛ ըլլաք . ինչ պէտք է
շատ խօսքեր . Աստուած ձեզի պէտք եղածը գիտէ դուք
իրմէ չխնդրած : Միայն քիչ խօսքով ձեր հնազանդութիւնը
Աստուծոյ ցցուցէք :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ձուս թեղէ չէ, կը հիւսէ,
Մէջը նստած կ'սպասէ .
Ձէնքեր շունի՛ որս կ'ընէ,
Լաւ կը ծըծէ, կը մարսէ :

Դ Ա Ս Ի Բ .

Ծ Ե Ր Ո Ւ Ն Ի Ն

Խեղճ մարդ մը սաստիկ ծերացեր էր, աչքերը աղէկ չէին տեսներ, ականջները ծանրացեր էին, ձեռքերը ծերութենէն կը դողդղային, այնպէս որ դժուար բերանը տարած ժամանակ կերակուրը կը թափթփէր :

Ծերունիին տղան ու հարսը այդ բանէն չէին ախորժէր, ծերը իրենց հետ միեւնոյն սեղանը չէին նստեցներ, այլ առանձին անկիւն մը հացը առջին կը դնէին և կաւէ ամանով կերակուր կուտային խեղճին : Անգամ մը հաց կերած ժամանակ, ծերունիին ձեռքերը դողդղացին և կաւէ ամանը վար իյնալով՝ կտորեցաւ : Հարսն ու որդին սաստիկ բարկացան և անկից ետքը սկսան փայտէ ամանով կերակուր տալ ծերունիին :

Ծերունիին թող մը ունէր : Օր մը տեսան որ գետինը նստեր, փայտի կտորուանքով բան մը կը շինէր :

Մայրը հարցուց . — Ի՞նչ կ'ընես, զաւակս :

— Փայտէ աման կը շինեմ, ըսաւ, որպէս զի երբ դու ու հայրիկս ծերանաք, անով կերակուր կերցնեմ ձեզ :

Հայր ու մայր իրարու երես նայեցան ու ամօթահար մնացին : Անկից ետքը սկսան ծերը պատուով պահել :

Առած . — Պատուէ ծերը՝ որ ծերանաս : Երբ ծերանաս, ծերին պատիւը կ'իմանաս :



Գ Ա Ս Ի Գ .

Հ Ա Յ Ր Ը

Տեսայ հայր մը որ տղոց մէջ նստած , իր բազմաթիւ ընտանիքին վրայ կ'զբաղէր , անոր վրայ կը հսկէր ու անոր պահպանութեան համար կ'աշխատէր :

Ու կ'ըսէր . « Զաւակներս թող երջանիկ ըլլան և ես ալ երջանիկ կ'ըլլամ » :

Զանոնք կրթել կուտար , որպէս զի լուսաւորեալ ու իմաստուն ըլլան . վարպետ արհեստաւորներու քով աշակերտ տուեր իէր , որպէս զի երբ մեծնան , իրենց աշխատութեամբն ապրին և ուրիշին կարօտ չըլլան :

Հօր մը բոլոր մտմտուքը իր զաւակաց վրայ է, [թէ ներկային և [թէ անոնց ապագային համար :

Ամէն բան կը բաժնէ անոնց հետ . [թէ որ պատառ մը հաց ունենայ, զայն ալ անոնց կուտայ : Ո՛հ, միշտ պիտի սիրեմ ու յարգեմ հայրս :

Պիտի սիրեմ զայն, երբ տակաւին երիտասարդ ու առոյգ է և վրաս կը հսկէ :

Պիտի յարգեմ զայն, երբ ծերանայ, մազերը ճերմկին և ես երիտասարդ ու առոյգ ըլլամ :

Հայրն ու իր զաւակները ծառին ու իր ճիւղերուն կը նմանին : Ճիւղերուն հիւթ, անունդ ու կեանք տուողը ծառն է :

Ո՛վ որ իր հայրը երեսէ կը [թողու, ինքն ալ [թշուառութեան մէջ պիտի իյնայ և օր մը պիտի մեռնի յետին ամօթով ու չքաւորութեամբ :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Յուշիկ յուշիկ կը քալէ
Գիշեր ցերեկ, փոյթը չէ,
Թէեւ նոյն տեղ միշտ ման գայ,
Բայց ոչ գլուխը կը դառնայ,
Ո՛չ քալելէ կը յոգնի,
Ո՛չ կերակրոյ պէտք ունի .
Բայց ինքն է որ քեզ կ'ըսէ .
« Ել, կեր, աշխատէ, պառկէ » :

Դ Ա Ս Ի Դ .

Չ Ա Ր Ա Ս Ր Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Յակոբ չարասիրտ տղայ մըն էր : Օր մը անտառը պտտած ատեն թուփերու մէջէն սոխակի բոյն մը գտաւ , որ լեցուն էր հաւկիթներով , առաւ զայն ու սկսաւ հեռանալ : Թռչունն հասաւ ու սկսաւ վազել Յակոբին ետեւէն՝ անդադար ճռուողելով : Բայց Յակոբ աւելի եւս կը վազեր , այնպէս որ առանց կոխած տեղը տեսնելու՝ ոտքը քարի մը զարկաւ , և երեսի վրայ ինկաւ . ճակատը վիրաւորուելով՝ արիւնը աղբիւրի պէս սկսաւ վազել . թռչունին բոյնն ալ գետինն ինկաւ ու բոլոր հաւկիթները կոտրեցան : Խեղճ սոխակը ողբալի ձայնով բոյնին վրայ գնաց նստաւ և տեսաւ որ իր գանձը բոլորովին քնջուէր է . ողբալի երգերով , թերեւս անէծքներ կարդալով , հեռացաւ գնաց : Երբ Յակոբ տուն դարձաւ վիրաւորուած ու արիւնլուայ , մայրը զինքը խստիւ յանդիմանեց և ըսաւ որ այս փորձանքը ըրածիդ պատիժն է :

Այս գէպքը ազէկ խրատ մը եղաւ Յակոբի , որ հասկցաւ թէ չարասրտութիւնն ուշ կամ կանուխ իր արժանի պատիժը կը գտնէ և անկից ետքը իր վայրքը ուղղեց :

Բառական վարժուքիւն . — Ի՞նչ կ'ըսեն թուղթ ծախողին , հաց ծախողին , հաց շինողին , կաթ ծախողին , շաքար ծախողին , պտուղ ծախողին , պանիր , իւղ , հաւկիթ ծախողին , օղի և գինի ծախողին , մանր ու մունր բաներ ծախողին :



Դ Ա Ս Ի Ե .

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն

Տօնի օր մըն էր . պայծառ օրուան մը առտուն , երբոր ցօղը դեռ գետինը ծածկած էր և տերեւներուն ու ծաղիկներուն վրայ կը վայլէր : Օհաննէս հօրը հետ պատրաստուցաւ գիւղին եկեղեցին երթալու :

Հեռուն ծառեր ու քանի մը տուներ կ'երեւնային ծառերուն և տերեւներուն մէջէն . եկեղեցին զանգակատունը բարձր կը տեսնուէր :

Չանգակին ձայնը սկսէր էր ժողովուրդը աղօթքի հրաւիրել , և քանի կը մօտենային , կը տեսնէին որ տեղացիք մաքուր զգեստներ հագած , տուներնուն կ'ելլէին եկեղեցի երթալու համար :

Ճամբուն վրայ փոքրիկ տղայք ու աղջիկներ կը տեսնուէին, որ աղօթագրքերը ձեռուընին՝ ուրախութեամբ կը վազվզէին:

Պատկառելի դէմքով ծերեր, որ շատ տարիներ ապրէր էին, ճակատին կնճռած ու ձիւնի պէս ճերմակ մազերով: Նմանապէս բարի մայրեր կ'երթային իրենց պզտիկ մանուկներուն հետ, որոնք ատոնց բոլորտիքը կը ցատկուտէին ճամբուն վրայ՝ ձիւներուն հետ խաղալով:

Օհաննէս հօրը հետ մտաւ եկեղեցի, ուր խորին լուծիւն մը կը տիրէր: Ամէնքը պատկառանօք կեցած՝ ատեն ատեն կը ծնրադրէին: Գեղեցիկ ձայնով փոքրիկ տղայք կ'երգէին ու բոլոր ժողովուրդը աղօթք կ'ընէր: Աղօթք կ'ընէին Աստուծոյ, որ աշխարհի մէջ եղած բոլոր բաները ստեղծեց ու ամենուն Տէրն է:

Օհաննէս հօրն ու մօրը համար աղօթք ըրաւ ու աղօթագրքին մէջէն Աստուծոյ փառափանական աղօթքներ կարդաց: Յետոյ եկեղեցիին արարողութիւնը աւարտեցաւ և ամէն մարդկամաց կամաց եկեղեցիէն դուրս ելաւ:

Օհաննէս ալ եկեղեցիէն մեկնեցաւ հօրը հետ, սիրտը գոհ էր: Երկինքը, դաշտերը ու ծաղիկները տեսնելով կ'ըզմայլէր. ամէն մարդ սիրելու, ամենուն աղէկութիւն ընելու փափաք մը կ'զգար սրտին մէջ. մոլութիւնները կ'ատէր ու անանկ կ'զգար որ բարի և առաքինի եղողը ուրախ կ'ըլլայ:

Գլխաւոր Տօներ. — Աստուածամօր ծնունդը: — Աւետումը: — Քրիստոսի ծնունդը: — Տեառնընդառաջ: — Ծաղկազարդ: — Զատիկ կամ Սուրբ Յարութիւն: — Համբարձումը: — Հոգեգալուստ: — Վարդավառ: — Վերափոխումն Ս. Աստուածածնի: — Խաչվերաց:

Գ Ա Ս Ի Չ .

Կ Ե Ն Ա Յ Պ Ա Տ Կ Ե Ր Ը

«Ո՛ր կ'երթայ աս գետին ջուրը, որ կը հոսի անդադար, կ'ըսէր աղայ մը իր մօրը . միթէ նորէն ետ պիտի դառնայ ու դարձեալ պիտի անցնի՞ այս տեղէն : — Ո՛չ զաւակս, պատասխանեց մայրը . այս գետը մէյ մըն ալ ետ չգառնար և ջուրերը մեր կեանքին պատկերներն են » :

Այսպէս ալ չկայ աշխարհիս մէջ զօրութիւն մը, որ կարենայ ետ դարձնել ժամանակը, որ կ'անցնի սոսկալի արագութեամբ : Տարիները իրարու կը յաջորդեն ամէն բան քշելով իրենց հետ : Դարերը, տուները, պատուհանները կը նորոգուին : Ամէն բան կը փոխուի, կը մաշի, կը մարի, միայն Աստուած կը մնայ :

Ուստի դաւէն վայրկեան մը անգամ մի կորսնցունէք, վասն զի կորսուած ուսման ժամանակը ետ չի դառնար :

Առածներ . — Չկայ մէկը որ կարենայ ըսել թէ ամենեւին պակասութիւն մը գործած չէ :

Որչափ հարստանանք, մեր փափաքներն ալ այնքան կը շատնան :

Ներէ՛ ուրիշի պակասութիւններուն, բայց քուկի՛ններուդ մի ներէր :

Իր պակասութիւնները չճանչցողը՝ չկրնար ուղղել զանոնք : Երախտագիտութիւնը բարի ու ազնիւ սրտերու զգացումն է :

Գ Ա Ս Ի Է .

Վ Ա Ր Դ Ե Ն Ի Ն Ո Ի Փ Ո Ի Շ Ը

Վարդենին ու փուշը միատեղ բուսած էին : Օրին մէկը փուշը ըսաւ իր գեղեցիկ դրացւոյն . « Բարեկամ, համբերութեանդ կը զարմանամ . չեմ գիտեր ինչո՞ւ փուշերովդ չես պատժեր այն մեղուները որոնք այնպէս տղտղալով հոտդ ալ կառնէն , հիւթդ ալ կը ծծեն » :

— Ինչո՞ւ պատժեմ , պատասխան տուաւ վարդենին համեստօրէն . չէ՞ մի որ իմ հիւթէս մեղր կը շինէն » :

Կ Ա Ր Գ Կ Ա Ն Ո Ն

Յակոբ ծոյլ տղայ չէ , բայց կարգ կանոն չգիտեր : Իրիկուան , դասերը լմնցնելէ ետքը , գիրքերը ու տետրակները աստին անդին ցրուած ու տարտղնած կը թողու : Առտուն ալ անկողնէն ելլելուն պէս կ'սկսի հազուստները փնտուել : Գուլպային մէկը աթոռին վրայ է , միւսը աթոռին տակը . կօշիկին մէկը անկողնին տակը , միւսը սանդուղին վրայ : Յակոբ այսպէս ամէն առտու ուշ կը մնայ հազուելու և դպրոց երթալու ու վարժապետէն յանդիմանութիւն կը լսէ : Ասանկ անկարգ մի լինիլ :

Ս Ո Ւ Ր Բ Կ Ա Ր Ա Պ Ե Տ

Սուրբ Կարապետ բարձր է բոլոր ,
ճամբայ ունի ոլոր մոլոր .
Կ'երթայ կուգայ շատ ուխտաւոր ,
Թէ ձիաւոր , թէ ոտաւոր .
Ընծայ կուտայ ոտաւորին ,
Ճուղապ կուտայ ձիաւորին :

Առանձներ . — Համեստութիւնը մեծ առաքինութիւն
մըն է :

Մարդս առաքինի ըլլալու համար ստեղծուած ու սահ-
մանուած է :

Մարդ եթէ մեռնի ալ , իր բարի ու չար գործերը կեն-
դանի կը մնան :

Ո՛րքան խոնարհամիտ ըլլաս , պատիւդ այնքան կը մեծնայ :

Աւելի աղէկ է բարի աղքատ ըլլալ քան թէ չար հա-
րուստ :

Խիղճը , որ մեր պակասութիւնները կը տեսնէ , միշտ կը
յիշեցնէ մեզ զանոնք :

Ուրիշին գէշութիւն ընող կամ փսաս հասցնողը , երջան-
կութիւն թող չյուսայ :



Գ Ա Ս Ի Ը .

Թ Ռ Չ Ո Ի Ն Ը

Գարունը եկաւ . ծառերն ու ծաղիկները ծաղկիլ սկսան .
ահա թռչուն մը հեռաւոր ու տաք երկրէ մը եկաւ անտառին
մէջ գեղեցիկ շագանակէնի մը վրայ իր բոյնը շինեց :

Փոքրիկ ու տկար թռչուն մըն է ան, ոստէ ոստ կը թռչտի և այնքան ալ պզտիկ է որ, տերեւի մը ետին կրնայ պահուրտիլ:

Քիչ մը խոտ, քիչ մը ոչխարի բուրդ ու կաղամախի ծառին ծաղիկներուն բարակ թելերը ժողուեց և ճարտար արուեստաւորի մը պէս մամուռով պատ հիւսեց ու անոնցմով մանր ոստերու վրայ բոյն մը շինեց. այս սիրուն բոյնին մէջ էգ թռչունը չորս հինգ հաւկիթ ածեց, այնչափ մանր որ, մորենիին սեւ պտուղներէն ալ փոքր էին ու արուին փետուրներուն գոյներով վրանին պիտակաւորուած:

Ո՛հ, ի՛նչ մեծ համբերութիւն է այս խեղճ տանտիկին մօրը համբերութիւնը. քսան օր այս բոյնին կապուած մնացեր է անչարժ և թեւերուն տակը կը տաքցնէ հաւկիթները. քանի մը ցորենի հատիկ ուտելու և կաթիլ մը ջուր խմելու համար վայրկեան մը միայն բոյնէն կը հեռանայ, յետոյ շուտով ու անհանգիստ սրտով ետ կը դառնայ:

Ո՛հ, ինչ հրաշալի է որ այն պզտիկ հաւկիթներուն մէջ մօրը տուած տաքութեամբ մանր թռչուններ կը ծնին, ու անոնք ալ իրենց կտուցովը կը զարնեն կը կտարեն վրանին պատած կեղեւը ու այնպէս հաւկիթէն դուրս կ'ելեն տկար ու մերկ և հազիւ ամենանուրբ փետուրներով ծածկուած:

Հիմայ ո՞վ պիտի անուցանէ զանոնք այս տկար ու ողորմելի վիճակին մէջ. հայրն ու մայրը հեռուներ կերթան դաշտերուն մէջ, փոքրիկ հունտեր կը ժողուէն, յետոյ կը վազեն կը բերեն ձագերուն կուտան, որոնք կտուցնին կը բանան ու կ'ուտեն. շատ շանցնիր՝ ձագուկները կը մեծնան և փետուրներով կը զարգարուին: Ետքը թռչելու կարող կ'ըլլան, ինքնիրեննին բան կրնան ուտել և ամէնը մէկէն կը

Թուչին կ'երթան դաշար՝ ցորենի հատիկներով և հունտերով կ'զբօսնուն:

Որդեա՛կ, երբ կը տեսնես որ թռչունը իր բոյնը ծառերուն մամուռովը կը շինէ, երբ կը տեսնես որ մայրը իր հաւկիթները կը տաքցնէ թեւերուն տակ, երբ կը տեսնես փոքրիկ թռչունները, երբ կը տեսնես որ հայրն ու մայրը իրենց ձագերը կը կերակրեն, յիշէ՛ թէ ասոնց ամէնն ալ Աստուած քրաւ:

Աստուած միայն կրցաւ զանհկայ ընել և մարդիկ ամենափոքր ճնճղուկ մը իսկ ստեղծելու անկարող են: Անոր համար ամենափոքր անասուններուն գէշութիւն ընելու չենք զի ասանկ գէշութիւն մը ընող տղան՝ Աստուծմէ շուտով իր պատիժը կը գտնէ:

Ն Ս Տ Ա Ր Ա Ն Ը

Սա նստարանը, որու վրայ նստեր եմ, քանի մը գործաւորներու գործ է:

Նախ փայտահարը անտառէն կաղնին կտրած է կացինով: Սղոցողը այն փայտերն առած ու անոնցմով ատաղձներ շինած է:

Յետոյ ատաղձագործը այն ատաղձները տաշած ու իրարու քով դնելով՝ նստարանը շինած է:

Ամենէն ետքն ալ ներկարարը գոյն տուած է անոր:



Դ Ա Ս Ի Թ .

Բ Ո Ւ Ն Ո Ւ Տ Ա Տ Ր Ա Կ Ը

Բու մը կար, որ ինքզինքէն զատ ուրիշը չէր սիրեր. բոլոր թռչունները կը փախչէին իրմէ և եթէ ճամբան դէմերնին ելլեր, ցուրտ ու տխուր կերպարանք մը կ'առնէին : Օր մը բուն իր վիճակէն գանգատեցաւ բարեսիրտ տատրակին : « Յանցանքը քուկդ է, ըսաւ տատրակը, դու թռչունները սիրէ, որ անոնք ալ քեզ սիրեն » :

Այս բուին պէս չեն սիրուիր այն աղաք որ ուրիշները չեն սիրեր : Եթէ իրենց ընկերներուն հետ բարեսրտութեամբ վարուին, եթէ անոնց ազնկութիւն մը եղած ատեն իրենք ալ ուրախանան և անոնց ցաւերուն մասնակցին, վերջապէս, մէկ խօսքով, եթէ ընկերնին սիրեն, անոնք ալ զիրենք կը սիրեն :

Բարեկամութիւնը մեծ առաքինութիւն մ'է :

Մ Կ Ն Ի Կ Ո Ի Կ Ր Ի Ա Յ

(Ա. Ռ. Ա. Կ)

Մկնիկ մը թեթեւ, յիմար,
Երբ դէս ու դէն կը դառնար,
Ճամբուն վրայ կը հանդիպի,
Խեղճ ու նկուն մէկ կրիայի.
«Ո՛հ, քու այդ տունըդ, կ'ըսէ
Տխուր տուն մըն է.
Անշուշտ կ'անիծես բնութիւնն
Որ քեզ տուաւ այսպիսի տուն.
Տե՛ս իմ տունս պարատ է,
Հոն ամէն բան առատ է».
Մեր լիրբ մուկին՝ կրիայն
Սապէս տուաւ պատասխան.
«Շատ գոհ եմ ես իմ բազդէս,
Աստուած տուաւ, գոհ եմ ես».

Ծ Ո Յ Լ Ը

Ծոյլ տղայ մը ամէն առտու սովորութիւն ըրած էր
անկողնէն ուշ ելլել: Հայրը զինքը խրատելու համար ըսաւ
իրեն, «Մարդ մը առտուն կանուխ քսակ մը ոսկի գտեր է
ճամբուն վրայ. կը տեսնես կանուխ ելլելուն օգուտը»:
Տղան պատասխանեց. «Ըսել որ այն ստակը կորսնցնողը
աւելի կանուխ ելեր է. տեսէ՛ք կանուխ ելողը ի՛նչ վնասներ
ունի»:
Այս պատասխանը սխալ է, անոր մի՛ հաւատար:



Դ Ա Ս Լ .

—

Վ Ա Ր Դ

Ձիւ ամէնքը կը կոչեն
Ծաղիկներու թագուհի,
Որովհետեւ իմ ծաղիկս
Սիրուն գոյն ու հոտ ունի:

Թէեւ կանանչ իմ թուփը
Շատերու ձեռք կը ծակէ,
Բայց այս անմեղ յանցանքը
Ինձ ամէն մարդ կը ներէ:

—

Ե Ր Կ Ո Ւ Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ք

Նրկու բարեկամ միասին լեռնէն կերթային. ճամբան
գէմերնին արջ մը ելաւ, որ կապառնար զիրենք փարատել:
Անոնցմէ մէկը արջին գալը տեսնելով անմիջապէս ծառի



մը վրայ ելաւ առանց ընկերոջը իմաց տալու, իսկ միւսը յիշելով որ արջը մեռեւններուն չմտասէր, անմիջապէս գետնի վրայ ինկաւ ու շունչը բռնելով՝ մեռել ձեւացաւ :

Արջը մօտեցաւ, բերանը մարդուն բերնին ու ականջին դրաւ, և տեսնելով որ շունչ չառնէր՝ մեռած կարծեց ու ձգեց գնաց :

Այն ատեն միւս ընկերը ծառէն վար իջնելով հարցուց . « Բարեկամ, արջն ինչ ըսաւ ականջդ ի վար » : Միւսը պատասխանեց . « Արջը ըսաւ որ ինձի բարեկամ չհամարիմ այն ընկերը, որու հաւատարմութիւնը փորձած եմ գժբաղդութեան մէջ » :

Տղայք, ճշմարիտ բարեկամը նեղութեան ժամանակ կը ճանչցուի :

Յ Ա Փ Ր Ո Ւ Կ

Իմ թուփերս փարթամ չեն
Եւ ոչ ծաղիկս փառաւոր .
Բայց անուշ հոտըս կ'առնեն
Ամէն մարդիկ հեռաւոր :

Այս պատճառաւ կլնաք դուք
Յափրուկ գանել ամէն տեղ .
Փունջերու մէջ պարզ անչուք
Կամ պարտիզաց մէջ շքեղ :



Գ Ա Ս Լ Ա .

Ա Ռ Ի Ի Ծ Ն Ո Ի Գ Ո Ր Տ Ը

Առիւծը գորտին կռկռալը կը լսէ ու ինքնիրեն կ'ըսէ .
«Սա գոռացողը մեծ գազան մը ըլլալու է» : Այս խօսքերը
ըսած ժամանակ մէյ մըն ալ նայիս գորտը ճահիճէն դուրս
ելաւ : Առիւծն իսկոյն իր ուժեղ թաթը զարնելով ճզմեց
զայն : «Ասկէց ետքը մինչեւ որ չտեսնեմ՝ չպիտի դատեմ» :
ըսաւ ինքնիրեն :

Գ Թ Ո Ի Թ Ի Ի Ն

Քու ունեցածէդ ողորմութիւն տուր և երես մի դարձուներ աղքատէն . ասանկով Աստուծոյ ողորմութեանն արժանի կ'ըլլաս և Աստուած ալ քենէ երես չդարձնէր :

Ունեցածիդ համեմատ ողորմութիւն տո՛ւր, եթէ շատ ունիս՝ շատ տո՛ւր, եթէ քիչ ունիս՝ քիչ տուր, բայց այն քիչն ալ սրտանց ու սիրով տո՛ւր :

Ասանկով կարօտութեան օրերուդ համար անհասնում հարստութիւն մը դիզած կ'ըլլաս . վասն զի Աստուած բարի գործերը կը տեսնէ ու վերջէն կը յիշէ :

Աղքատին ողորմիլը Աստուծոյ փոխ տալ է . Աստուած օր մը իր պարտքերը կը վճարէ : Աղքատին եթէ գաւաթ մը ջուր տաք, ան ալ անվարձ չպիտի մնայ . օր մը Աստուած անոր փոխարէնը պիտի հատուցանէ ձեզի :

Հացերնիդ բաժնեցէք անօթի եղողներուն հետ, մերկ եղողները ծածկեցէք ձեր հազուստներով և գաւաթ մը ջուր տուէք անոր որ ծարաւ է :

Երբ ձեր արտը հնձէք, ետ մի գառնաք՝ ձեռուրնուդ թափած հասկերը ժողուելու համար : Այլ թողէք որ օտարականը, որբը, այրին ձենէ ետքը ժողուեն զանոնք, որպէս զի Աստուծոյ օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ :

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Ի՞նչ է ան որ առատն չորս ոտքի վրայ կը քալէ, կէս օրին երկու ոտքի վրայ և իրիկունն երեք ոտքի վրայ :

Դ Ա Ս Լ Բ .

Ա Ն Հ Ն Ա Չ Ա Ն Դ Ո Ի Թ Ի Ի Ն

Մարդ մը երեք սիրուն ոսկեգոյն ձկներ ունէր , զորս դրած էր վճիտ լճակի մը մէջ . յաճախ անոնց հացի կտորներ կը նետէր՝ ըսելով . « Ձկներ , եթէ երջանիկ ըլլալ կ'ուզէք , չըլլայ որ մերձակայ մեծ լճակը երթաք , և երբ ես ձեր քովը չեմ , ջուրին երեսը մի լողաք , կը հասկնամք » :

Օր մը մեր անխոհեմ ձկնիկներն ինքնիրեննին ըսին .

« Ահաւասիկ անգութ մարդ մը , որ մեզ չարչարելէ հաճոյք կ'զգայ . ինչո՞ համար երբեմն ջուրին երեսը չլողանք , ինչո՞ համար երբեմն սա քովի մեծ լիճը չերթանք ու քիչ մը դքօնունք պտտելով » :

« Ես հիմայ կ'երթամ հոն կը շրջագայիմ , ըսաւ մին . — Ես ալ , ըսաւ միւսը , քիչ մը պիտի խաղամ արեւուն մէջ » : Նոյն պահուն երրորդն ըսաւ ինքնիրեն . « Այս մարդը մեզ կը սիրէ , քանի որ մեզ տեսնելով ու մեզի հացի կտորներ փշրելով հաճոյք կ'զգայ , հարկաւ պատճառ մը կայ որ մեզ չթողուր , այդ պատճառը չեմ գիտեր , բայց պիտի հնազանդիմ իրեն » : Առանց ականջ կախելու իր ընկերներուն կատակներուն՝ ջուրին խորը մնաց . միւսները իր միամտութեանը վրայ խնդացին :

Բայց գիտէ՞ք , ինչ պատահեցաւ :

Գայլաձուկ մը կլլեց մեծ լճակը դացողը . որացող թռչունն մըն ալ ջուրին երեսը խաղացողը յափշտակեց : Միայն իր տիրոջը հնազանդողը ողջ մնաց :

Թ Ի Թ Ե Ռ Ն Ո Ի Մ Ա Ն Ո Ի Կ

ՄԱՆՈՒԿՆ

Ըսէ ինծի, ի՞նչ բանով
Կ'ապրիս, թիթեռնդ իմ սիրուն .
Ամբողջ օրըդ խաղերով
Կ'անցունես, չղգաս յոգնութիւն :

Թ Ի Թ Ե Ռ Ն


Սիրուն կանանչ դաշտին մէջ
Կեանք կը վարեմ համարձակ .
Եւ ծաղկանց հիւթը անուշ
Իմ կերակուրս է մինակ :

Բայց իմ կեանքս խիստ կարճ է,
Հազիւ օրուան չափ երկար .
Բարի եղի՛ր, ո՞վ մանկիկ,
Խնայէ՛ զիս, ձեռք մի տար :

Առածներ . — Աստուած ձեռք է տուեր աղէկ բան շի-
նելու համար :

Մարմնոյ ճրագը աչքն է :

Սիրտին բանալին լեզուն է :



Գ Ա Ս Լ Գ .

Ո Ր Կ Ր Ա Մ Ո Լ Ո Ի Թ Ի Ի Ն

Միհրան շատակեր տղուն մէկն էր : Ձեռքը քանի մը ստակ անցնելուն պէս՝ ուտելիքի կուտար : Օր մը շուկան գեղեցիկ շագանակներ տեսաւ : Որովչետեւ դեռ փոքր էր, ծախողին հարցուց թէ կ'ուտուի՞ մի :

«Այս շագանակները . հապա՛, պատասխանեց մարդը : Ա՛ռ ասկէ, տղաս, պիտի տեսնես ինչ համով են, մանաւանդ երբ մոխրի մէջ խոռովես : Ա՛ռ, տալիք ստակիդ վրայ չպիտի ցաւիս : »

Գոթազդաբար Միհրան ունեցած ստակը արդէն ուրիշ ուտելիքի տուած էր : Ուստի գաղտուկ մէկ երկու շագանակ առաւ ու գրպանը դրաւ՝ առանց պողալաճառը նըշմարելու :

Տուն եկածին պէս խոհանոց դնաց և հոն մարդ չըլլալով՝ շագանակները տաք մոխրի մէջ դրաւ : Տաքութենէն շուտ մը սկսան սուլել : Միհրան այս ձայնը լսելով կ'ախորժէր և զանոնք աւելի շուտ եփելու համար, մոխրին վրայ քանի մը վառածուխ դրաւ ու սկսաւ բոլոր ուժովը փչել :

Յանկարծ շագանակներէն մին պայթեցաւ : Տաք մոխրին ու ածուխները անանկ ուժով ցատկեցին փոքրիկ անխոհեմին երեսը որ, կարծեց թէ աչքերը այրեցաւ և սկսաւ լալով պօռալով ասդին անդին վազել :

Տունին մէջ եղողները, այս ազմուկը լսելով, խոհանոց վազեցին և այն ատեն տղուն ըրած գողութիւնը ե-

ըեւան ելաւ : Փոքրիկ աւազակը շատ բան քաշեց մինչեւ որ աչքերը կատարելապէս բժշկուեցան : Ըրածին շատ զղջաց և շատ անգամ ինքնիրեն կ'ըսէր .

« Որկրամուրթեան ծայրը շատ անգամ դողութիւն է և միշտ ցաւերու զղջում յառաջ կը բերէ : »

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Գիւղացիին մէկը սայլով խոտ կը տանէր . սայլին մէջ կային նաև գայլ մը և գառնուկ մը : Գետի մը եզերքը հասաւ և երբ կ'ուզէր կամուրջէն անցնիլ , պահապանը անոր ըսաւ . « Եթէ կ'ուզես թող տամ որ առանց վարձքի կամուրջէն անցնիս , պէտք է որ գայլը , գառնուկը ու խոտը զատ զատ դիմաց անցունես , բայց այնպէս որ իրարու ֆլասս չի հասցնեն » : Հիմայ գիւղացին ի՞նչ կարգով պէտք է իր ապրանքները կամուրջէն անցունէ , որպէս զի գայլը գառնուկին , կամ գառնուկը խոտին հետ մինակ չմնալով զիրար չուտեն

Դ Ա Ս Լ Դ .

Ս Ա Լ Ա Ք Ա Ր Ը

Խիստ հարուստ մարդ մը օրին մէկը աղքատ գործաւորի մը հետ կռիւի բռնուեցաւ և բարկութիւնը չկրնալով զըսպել՝ գետնէն սալաքար մը առաւ ու անոր նետեց : Չքաւորը

քարն առաւ ու տուն տարաւ : « Կարելի է օր մը , կ'ըսէր ինքնիրեն , ես ալ հարստանալով՝ կրնամ այս քարը թշնամիիս նետել՝ առանց իրմէ վախնալու տեղ մը ունենալու » :

Հարուստը իր հպարտութեամբը , ծուլութեամբն ու շրուայլութեամբը կամաց կամաց չքաւորութեան մէջ ինկաւ եւ օր մը , պատուտած հագուստներով , աղքատին խրճիթին առջևէն անցաւ մուրացկանի պէս :

Աղքատ գործաւորը անոր անցնիլը տեսնելով՝ քարը առաւ ու պատրաստուեցաւ թշուառին նետելու . բայց յանկարծ ինքզինքը բռնելով՝ խորհեցաւ ընելիքին վրայ ու ինքնիրեն ըփաւ .

« Հիմայ կը զգամ որ մարդ իր ընդունած չարիքին փոխարէն չարիք ընելու չէ : Առաջին անգամ խոհեմութիւն սեպեցի վրէժխնդրութեան փորձութիւններուն դիմադրել , իսկ այսօր որ աղքատութեան մէջ է , անկէ վրէժ լուծելը՝ առաքինի մարդու մը անարժան անգթութիւն մը ու վատութիւն մըն է : »

Այս խօսքերն ըսելով՝ սալաքարը վար ձգեց ու խոշոր կտոր մը հաց տուաւ սնանկացեալ մարդուն , որ անօթութենէն մուրալու սկսեր էր :

Առածներ . — Հաց ու պանիր , կեր ու բանիր : — Գաւաթ մը ջուր , ս'վ ուզէ տուր :

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ձուրի մէջ զիրար կը նային երկու եղբայր ,
բայց դարերով իրարու չեն մօտենար :



Չ Մ Ե Ռ

Արեւն իր ոյժն կորուսած՝
Ամպերու տակ պահուըտեցաւ .
Սաստիկ քամին ժառեր ամէն
Տերևաթափ ու մերկ ըրաւ :

Երկինքի մէջ ամպի դէզեր
Անձրևները կը պատրաստեն,
Անտառներն ալ տերևներով՝
Առուն տխուր կը կարկաջին ։

Շատ թռչուններ ու թիթեռներ
Անյայտացան շուտ, դաշտերէն .
Ծառը չունի կանանչ տերև ,
Նա զրկուած է իւր զարդէն ։

Այսպէս ալ ամէն սողուններ
Եւ վայրենի մեծ թռչուններ
Կ'աճապարեն իրենց համար
Ափրիկէի տաք տեղ երթալ ։

Գ Ա Ս Ժ Ե .

Օ Գ Տ Ա Կ Ա Ր Ը Կ Ը Ս Ի Ր Ո Ի Ի

Ճանճերն իրենց կեցած տեղէն դռհ չէին ։ Անոնք խորհեցան որ ուրիշ երկիր երթան , բայց չէին ուզեր մինակ երթալ , ուստի իրենցմէ մէկը մեղուին զրկեցին որ ան ալ գայ ։

— Մեղու եղբայր , ըսաւ ճանճը , չար մարդիկ զմեզ այս տեղ հանգիստ չեն թողուր ։ Հերիք չէ որ ամէն բան կը պահեն մեզմէ , պատուհաններուն մէջն ալ թոյն կը դրնեն որ ուտենք ու մեռնինք ։ Ստոյգ է որ խրճիթներու մէջ զմեզ չեն նեղեր մարդիկ , բայց այն տեղ ալ ուրիշ թշնա-

մի ունինք : Սարգերը իրենց ոստայններուն մէջ կը բռնեն զմեզ , կը խեղդեն ու կը ծծեն մեր արիւնը : Եկ՛ւր , մեղու եղբայր , այս տեղէն երթանք և հեռանանք :

Մեղուն այս խօսքերը լսեց ու պատասխան տուաւ .
« Դուք ուր որ կ'ուզէք գացէք , ես ձեր ընկերը չեմ : Ինծի համար հոս շատ լաւ է . ամէնքը զիս կը սիրեն ու կը պատուեն , ես ալ ամենուն օգտակար կ'ըլլամ . իմ մեղրս թէ չար և թէ բարի մարդոց , թէ աղքատին և թէ հարուստին բերանը կ'անուշցնէ : Իմ շինած մոմս Աստուծոյ տաճառը կը լուսաւորէ : Դուք գացէք ո՛ւր որ կ'ուզէք . միայն սա աղէկ գիտցէք որ ամէն տեղ պիտի հալածեն զձեզ , վայն զի ոչ միայն մէկուն օգուտ մը չունիք , այլ և ամէնքը կը ձանձրացնէք : »

Մ Ա Յ Ր Ն Ո Ի Ո Ր Դ Ի Ն

—
Ո Ր Դ Ի Ն

Մայրիկ , կը խնդրեմ ,
Ըսէ ինձ , տեսնեմ ,
Ինչու ամէն օր •
Եղբայրս Գրիգոր
Կանուխկէկ կ'ըլլայ ,
Եւ ո՛ւր կ'երթայ նա ,
Եւ մինչ իրիկուն
Ալ չդառնար տուն :

Մ Ս Յ Ր Ը

Զաւակս , եղբայրդ
Ամէն առաւօտ
Կանուխկէկ դպրոց
Կը վազէ կ'երթայ ,
Եւ մինչ իրիկուն
Այնտեղ կը մնայ :
Հոն կ'երթան նոյնպէս
Ուրիշ տղաքներ ,
Անոր ընկերներ .
Անոնք հոն կ'երթան
Որ ուսում սորվին
Եւ ետքը բարի
Խեղօք մարդ լինին :





1864

Dear Mother
I received your letter
of the 10th and was
glad to hear from
you. I am well and
hope these few lines
will find you the same.
I have not much news
to write at present.
The weather is very
warm here now.
I must close for this
time. Write soon.
Your affectionate son,
John Smith

BB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM0633

255.07.02.01.06.00/

